

Կ.Յ. ԱՐԳԱՐՅԱՆ

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ
ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Կ.Յ. ԱԲԳԱՐՅԱՆ

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ
ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

(դասախոսություն)



ԵՐԵՎԱՆ
ՏՆՏԵՍԱԳԵՏ
2006

ՀՏԴ 336
ԳՄԴ 65.9 (2) 262
Ա 128

Հրատարակության և ներկայացրել ՀՊՏՀ
ֆինանսական ենթակառուցվածքների ամբիոնը

Մասն. խմբագիր՝ տ.գ.թ. Գ. Սարգսյան
Գրախոսներ՝ տ.գ.թ., դոց. Վ. Մուրադյան
տ.գ.թ. Լ. Ղազարյան

Ա 128 Արգարյան Կ.Հ.
Առևտրային բանկերի էությունն ու գործառույթները:
Դասախոսություն. - Եր.: Տնտեսագետ, 2006. - 48 էջ.

Դիտարկված են ՀՀ առևտրային բանկերի էությունը, տնտեսական
բովանդակությունը:

Առանձնակի ուշադրություն է դարձված առևտրային բանկերի գործառ-
նություններին, որոնց միջոցով ձևավորվում են դրա ռեսուրսները, ապա
տեղաբաշխվում տնտեսության տարբեր ճյուղերում: Քննարկվել են նաև
վարկային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրաց-
ման հարցերը, առևտրային բանկերի և տնտեսավարող սուբյեկտների
փոխհարաբերությունների կարգավորման խնդիրները:

Նախատեսված է բուհերի ուսանողների համար:

Ա $\frac{0605010204}{719(01)-2006}$ 2006

ԳՄԴ 65.9 (2) 262

ISBN 99941-51-37-1

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2006

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՕՐԻՆԱԶՎՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դեռևս հնագույն ժամանակաշրջանում հասարակական կյանքը մարդկանց ստիպել է զբաղվել միջնորդական գործունեությամբ, որն իրականացվում էր փողի հետ կապված փոխադարձ վճարումների, տարբեր կշիռ ու բովանդակություն ունեցող թանկարժեք մետաղների միջոցով:

Անտիկ ժամանակաշրջանում, երբ տիրապետող էր բնատնտեսությունը, արդեն սկսում էին կիրառվել բնափրային փոխառությունները: Ըստ մեզ հասած տեղեկությունների, օրինակ, Հունաստանում նման փոխառություն տրվում էր հողի գրավադրությամբ: Նշվում է նաև, որ Հին Եգիպտոսում բանկային գործը գտնվում էր պետության իրավասության ներքո: Պահպանված տեղեկությունների համաձայն՝ հին եգիպտական բանկերը, բացի ֆիսկալ գործառույթներից, իրականացնում էին նաև այլ գործառնություններ, մասնավորապես՝ փողի գնում, վաճառում և փոխանակում, փոխառությունների տրամադրում, նույնիսկ հիպոթեքային և լոմբարդային գործառնություններ: Միաժամանակ կատարվում էր պարտավորությունների հաշվառում՝ մինչև ժամկետի ավարտը, ավանդների ընդունում:

Բանկային գործը զարգացման որոշակի աստիճանի վրա է գտնվել անտիկ Հռոմում և Հունաստանում:

Սակայն նորոյա բանկային գործի զարգացման սկիզբը հավանաբար պետք է համարել 17-րդ դարը: Սկզբնավորվել է Անգլիայում, որն այդ ժամանակաշրջանում համարվում էր առավել առաջավոր ինդուստրիալ երկիր: Առաջին բանկիրները, որպես կանոն, եղել են ոսկու գործով զբաղվող վարպետները:

Այն բանից հետո, երբ գործարքներում սկսեց օգտագործվել ոսկին, ակնհայտ դարձավ, որ ինչպես գնորդների, այնպես էլ առևտրականների համար ո՛չ շահավետ է, ո՛չ էլ, մասնավաճառ, անվտանգ յուրաքանչյուր անգամ գործարքներ կնքելիս տեղափոխել, կշռել ոսկին, ստուգել դրա մաքրությունը: Ուստի, որպես կարգ ընդունվեց ոսկին պահպանության տալ ոսկու գործով զբաղվող վարպետներին, որոնք ունեին հատուկ ստեղծված նկուղներ և անհրաժեշտության դեպքում կարող էին վճարովի հիմունքներով տրամադրվել: Շուտով ապրանքներն սկսեցին փոխանակվել նույն վարպետների կողմից տրամադրված անդորրագրերով, որոնք էլ, փաստորեն, դարձան թղթադրամի վաղ ձևը:

Մինչև 1861թ. Ռուսաստանի բանկային համակարգը ներկայացնում էին հիմնականում գյուղացիական բանկերը և բանկային ֆիրմաները: Դրանցից առաջինները վարկավորում էին կալվածատերերին՝ նրանց անվան գրավով, իսկ երկրորդները՝ արդյունաբերությունը և առևտուրը: 1914-1917թթ. Ռուսաստանի բանկային համակարգն իր մեջ ընդգրկում էր Պետական բանկը, առևտրային բանկերը, փոխադարձ վարկի ընկերությունը, քաղաքային հասարակական բանկերը, հիպոթեքային վարկի հաստատությունը, վարկային կոոպերացիան, խնայողական դրամարկղերը, գրավատները (լոմբարդները):

Բանկային համակարգում գլխավոր դերը պատկանում էր Պետական բանկին և բաժնետիրական առևտրային բանկերին:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո Ռուսաստանում տեղի ունեցավ համատարած ազգայնացում, որի արդյունքում բռնագրավվեց մասնավոր բանկերի բաժնետիրական կապիտալը, միաձուլվեց Ռուսաստանի Պետական բանկի հետ, և ձևավորվեց Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերացիայի համապետական սոցիալիստական բանկ: Բանկային գործը համարվեց պետական մենաշնորհ: Միաժամանակ վերացվեցին գործող հիպոթեքային բանկերը և բանկային հիմնարկությունները, որոնք սպասարկում էին փոքր և միջին քաղաքային բուրժուազիային, ինչպես նաև արգելվեցին արժեթղթերի հետ կապված գործառնությունները:

Մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը Ռուսաստանի բանկային համակարգը կազմված էր չորս մակարդակներից, դրանք էին՝ Կենտրոնական բանկը, առևտրային և հողային բանկերի համակարգը, ապահովագրական ընկերությունները և մի շարք մասնագիտական ինստիտուտներ: Հեղափոխությունից հետո, ն էպ-ի ժամանակաշրջանում, երբ զարգացան ապրանքադրամական հարաբերությունները, մասնակիորեն վերականգնվեց նաև վարկային համակարգը: Սակայն վերջինս ներկայացված էր միայն երկու մակարդակով: Առաջին մակարդակի վրա էր գտնվում Պետական բանկը, իսկ երկրորդ մակարդակում բավականին լայն տարածված բաժնետիրական առևտրային բանկերը, կոմունալ կոոպերատիվ բանկերը, խնայողական դրամարկղերը և այլն:

Խորհրդային տարիներին վարկային համակարգի արմատական վերակազմավորում կատարվեց 1930-ական թվականների սկզբին, ինչի արդյունքում այդ համակարգը դարձավ ավելի միասնական ու կենտրոնացված: Ըստ էության, վարկային համակարգը ներկայացված էր մեկ մակարդակով, որտեղ ընդգրկված էին Պետբանկը, Շինարարական բանկը, Արտաքին առևտրի բանկը: Վարկային համա-

կարգի այս յուրօրինակ կառուցվածքը պայմանավորված էր ոչ այնքան տնտեսական պահանջներով, որքան քաղաքական շարժառիթներով:

Վարկային համակարգի նման «վերակազմավորման» արդյունքում, ըստ էության, կազմալուծվեց երկրի ողջ վարկային համակարգը և փոխարինվեց բանկային համակարգով: Ընդ որում, վերջինս դարձավ վարչահրամայական համակարգի ուրույն մոդել, քանի որ լիովին գտնվում էր կառավարության և, ամենից առաջ, ֆինանսների նախարարության ենթակայության տակ: Վարկային համակարգից դուրս թողնվեց ապահովագրական համակարգը: Նման վերակառուցումն այն կարևոր գործընթացներից էր, որն ուղղված էր շուկայական հարաբերությունների վերացմանը և տնտեսության վարչահրամայական կառավարման համակարգի ձևավորմանը:

Տնտեսության կառավարման վարչահրամայական համակարգի պայմաններում, ամբողջ խորհրդային երկրի տարածքում, այդ թվում նաև Հայաստանում, իսպառ վերացվեցին վարկային և բանկային համակարգերի ձևավորման բոլոր նախադրյալները: Երկրում բացակայում էր մուրհակային շրջանառությունը, տեղի էր ունենում ձեռնարկությունների պարտքերի զանգվածային դուրսգրում, հատկապես գյուղատնտեսության ոլորտում, ինչի հետևանքով այդ բնագավառի ղեկավարներն ամենևին էլ չահագրգռվածություն չէին ցուցաբերում արտադրության արդյունավետության բարձրացման հարցում, ցածր էր վարկի տոկոսի մակարդակը: Ձեռնարկությունների ու կազմակերպությունների վարկավորումն իրականացվում էր կառավարության կողմից՝ ուղղահայաց կարգով, թույլ էր տնտեսության տարբեր ճյուղերի ու ձեռնարկությունների վրա բանկային հսկողությունը, վերջիններս զրկված էին վարկավորման այլընտրանքային աղբյուրներ որոնելու հնարավորությունից, չէր վերահսկվում բանկային ու վարկային փողի էմիսիան և այլն:

Այն բանից հետո, երբ խորհրդային Միության տնտեսությունը գրեթե սպառեց զարգացման էքստենսիվ հնարավորությունները, փորձ արվեց վիճակը շտկել տնտեսությունը ինտենսիվ զարգացման ռելսերի վրա փոխադրելու միջոցով: Իսկ դրա իրականացման լավագույն ուղին համարվեց շուկայական հարաբերությունների արմատավորումը, ինչը հնարավոր չէր առանց բանկային համակարգի վերակառուցման: Այդ նպատակով 1987թ. տեղի ունեցավ ԽՍՀՄ բանկային համակարգի վերակազմավորում: Դրա արդյունքում նախկին երեք բանկերի մենաշնորհը փոխարինվեց մի քանի-

սով: Նոր բանկային համակարգի մեջ մտան Պետական բանկը, Ագրոարդյունաբերական բանկը, Արդշինբանկը, Բնակսոցբանկը, Խնայբանկը, Արտաքինէկոնոմբանկը: Սրանց մեջ նոր էին Ագրոարդյունաբերական բանկը և Բնակսոցբանկը, իսկ մյուսները պարզապես վերակազմավորվեցին:

Սակայն 1987թ. նշված վերակառուցումը չտվեց սպասված արդյունքը այն պարզ պատճառով, որ դրանք իրենց գործունեությունը պետք է ծավալեին նախկին միասնական պետական սեփականության շրջանակներում: Բացի դրանից, բացակայում էր նոր պայմաններին համապատասխանող տնտեսական մեխանիզմը, նոր վարկային աղբյուրներ գտնելու հնարավորությունը, շարունակվում էր վարկային ռեսուրսների վերաբաշխման նախկին արատավոր պրակտիկան, չկար դրամական շուկա, ուր պետք է կատարվեր վարկային ռեսուրսների առևտուր և այլն: Բարեբախտաբար, նշված վերակազմավորման ոչ արդյունավետ լինելը շատ շուտ ակնհայտ դարձավ, և 1988 թվականից սկսվեց բանկային բարեփոխումների երկրորդ փուլը, որի արդյունքում երկրում ստեղծվեցին առաջին առևտրային բանկերը, որոնք կոչված էին որպես բազա ծառայելու շուկայական հարաբերությունների և բանկային համակարգի նոր կառուցվածքի ձևավորման համար: Դրանով իսկ սկիզբ դրվեց վարչահրամայական համակարգից դեպի տնտեսության կառավարման ճկուն տնտեսական մեթոդներին անցմանը, ինչը հնարավորություն տվեց ֆինանսական ռեսուրսների ազատ կիրառում իրականացնելու տնտեսության առավել արդյունավետ ոլորտներում:

Ստեղծված պայմաններում անհրաժեշտություն առաջացավ ստեղծելու դրամավարկային նոր համակարգ, որը պետք է համապատասխաներ շուկայական հարաբերությունների ձևավորման ու զարգացման սկզբունքներին: Ըստ այդմ, փոփոխվեց Պետական բանկի կարգավիճակը և տեղը երկրի տնտեսության մեջ: Պետբանկը դուրս բերվեց կառավարության ենթակայությունից և, դրանով իսկ, ստացավ շուկայական տնտեսություններ ունեցող երկրներին հարիի տնտեսական անկախություն: Փաստորեն, երկրում ստեղծվեց երկնակարգակ բանկային համակարգ. առաջին մակարդակում գտնվում էր Կենտրոնական բանկը, իսկ երկրորդ մակարդակում՝ առևտրային բանկերը:

Այսպիսին է Հայաստանի Հանրապետության վարկային համակարգի ձևավորման էվոլյուցիան մինչև անկախության հռչակումը, որի շրջանակներում էլ ծագեցին առևտրային բանկերը:

Պաշտոնապես Հայաստանի Հանրապետության անկախությունը ճանաչվեց 1991 թվականի սեպտեմբերի 21-ին՝ համաժողովր-

դական հանրաքվեի արդյունքների հիման վրա: Իսկ 1993թ. ՀՀ Գերագույն խորհուրդն օրենքներ ընդունեց ինչպես «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին», այնպես էլ «Հայաստանի Հանրապետության բանկերի և բանկային գործունեության մասին»: Այդ օրենքների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը համարվեց ԽՍՀՄ Պետական բանկի Հայաստանյան գրասենյակի իրավահաջորդը և գլխավոր բանկը, որի գույքը պատկանում է պետությանը: Նույն տարվա նոյեմբեր ամսից ՀՀ տարածքում դադարեցվեց ԽՍՀՄ Պետբանկի և Ռուսաստանի Դաշնության ԿԲ-ի 1991-1992 թթ. դրամանիշերի շրջանառությունը: Ռուսական ռուբլու փոխարեն շրջանառության մեջ դրվեց հայկական դրամը: Այդ գործընթացն ավարտվեց 1994թ.: Բոլոր հաշվարկները Հայաստանի Հանրապետության տարածքում սկսեցին կատարվել բացառապես հայկական դրամով¹:

1993թ. հուլիսի 1-ից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն սկսեց ՀՀ տարածքում գրանցված բանկերի և դրանց մասնաճյուղերի վերագրանցման գործընթացը, և պահանջվում էր, որ բանկերի կանոնադրությունները համապատասխանեին «Հայաստանի Հանրապետության բանկերի ու բանկային գործունեության մասին» և «ՀՀ կենտրոնական բանկի մասին» օրենքների պահանջներին: Ուստի Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերի գործունեությունը, ըստ էության, սկսվում է 1994 թվականից:

Վերագրանցման գործընթացի ավարտից հետո պարզվեց, որ Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են 50 առևտրային բանկեր՝ իրենց 123 մասնաճյուղերով, որոնց կանոնադրական կապիտալի ընդհանուր գումարը կազմում էր 48,0 մլն դրամ: Ընդ որում, առևտրային բանկերի համար նվազագույն կապիտալի նորմատիվը սահմանվում էր 500.000 դրամ:

Անկախություն հռչակելուց հետո Հայաստանի Հանրապետությունում սկսվեց տնտեսության մեջ շուկայական հարաբերությունների ձևավորման ու զարգացման ժամանակաշրջան: Զխորանալով տնտեսության կառավարման վարչահրամայական համակարգից շուկայական համակարգին անցնելու դժվարությունների նկարագրման մեջ՝ պարզապես նշենք, որ պահանջվում էր արմատապես վերակառուցել հանրապետության ինչպես վարկային, այնպես էլ

¹ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին», «Հայաստանի Հանրապետության բանկերի և բանկային գործունեության մասին», «ՀՀ օրենքների կիրառության մասին» ՀՀ Գերագույն խորհրդի որոշումը՝ 30.03.1993 թ.:

բանկային համակարգը: Այդ ուղղությամբ կատարվեցին առաջին քայլերը: Նախ՝ երկրում ստեղծվեց շուկայական տնտեսություններ ունեցող երկրներին բնորոշ երկնակարգակ բանկային համակարգ, և ապա՝ լիակատար ինքնուրույնություն տրվեց ինչպես առաջին մակարդակում գտնվող ՀՀ կենտրոնական բանկին, այնպես էլ առևտրային բանկերին:

Հայաստանի Հանրապետության վերափոխման այս նոր փուլում, որը բնութագրվում է շուկայական հարաբերությունների անցման ժամանակաշրջան, կտրուկ բարձրացավ վարկային համակարգի դերը և նշանակությունը: Այդ դերը դրսևորվում է նրանում, որ բանկերը մի կողմից ակտիվորեն նպաստեցին, որպեսզի տնտեսության զարգացումն ուղղվի դեպի շուկան, մյուս կողմից՝ ակտիվորեն օգնում են տնտեսավարական սուբյեկտներին՝ շուկայական բարեփոխումների գործընթացում: Անցման ժամանակաշրջանի սկզբնական փուլում, հատկապես Հայաստանի Հանրապետությունում, բանկերը էական դեր խաղացին և այժմ էլ շարունակում են նպաստել փոքր ու միջին բիզնեսի զարգացմանը:

Բանկային համակարգի և հատկապես առևտրային բանկերի և տնտեսության զարգացման փոխազդեցությունը երկակի է: Մի կողմից՝ բանկերը և վարկային համակարգն ամբողջությամբ վերցրած, պոզիտիվ դեր են խաղում երկրի տնտեսության արդյունավետության բարձրացման գործում և մյուս կողմից՝ վերջինիս զարգացումը որոշակիորեն նպաստում է առևտրային բանկերի ֆինանսական հզորացմանը: Այդ են վկայում ՀՀ անցած ժամանակաշրջանի մակրոտնտեսական ցուցանիշները: Այսպես. 2001-2003 թթ. «Հայաստանի Հանրապետությունում արձանագրվեցին համախառն ներքին արդյունքի իրական աճի աննախադեպ բարձր տեմպեր, համապատասխանաբար՝ 9.6, 12.9 և 13.9 տոկոս: Այդ տարիներին միջին տնտեսական աճը կազմում է 12.1 տոկոս, ինչը ավելի քան կրկնակի անգամ բարձր է 1994-2000 թվականներին գրանցված միջին տարեկան աճից»²: Հայաստանի տնտեսության միջնաժամկետ զարգացման անգամ զգուշավոր կանխատեսումները վկայում են, որ 2005 թվականին 1989 թվականի մակարդակը կգերազանցվի: Նույն ժամանակահատվածում հանրապետության բանկային ակտիվներն աճել են 13,4 %-ով՝ 2004 թ. կազմելով 28,9 մլրդ դրամ: Բանկային ակտիվների բաժինը ՀՆԱ-ում այդ տարիներին տատանվել է 18-22 %-ի սահմաններում: Որոշակիորեն ավելացել է վարկե-

² Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, համառոտ ուղեցույց, 2004 թ., էջ 10:

րի ծավալը, որը 2003թ. կազմել է 96,6 մլրդ դրամ՝ գերազանցելով 2001 թ. մակարդակը մոտ 29 %-ով: Վարկի բաժինը ՀՆԱ-ում այդ տարիներին կազմել է 6 %: Եթե 1994 թվականին ՀՀ առևտրային բանկերի կանոնադրական կապիտալը կազմում էր 48,0 մլն դրամ, ապա 2004 թվականի վերջին այդ ցուցանիշը հավասարվեց 39,2 մլրդ դրամի:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության տնտեսության ակնառու աճն ուղեկցվել է հանրապետության բանկային համակարգի կառուցվածքային փոփոխություններով: Եթե 1994 թվականին Հայաստանի Հանրապետությունում գործում էին, ինչպես արդեն նշվել է, 50 առևտրային բանկեր, ապա 2004 թվականի վերջին դրանց թիվը կրճատվել է հասել է 19-ի: Սակայն դրանց ֆինանսական ռեսուրսների ծավալը ոչ միայն չի նվազել, այլև շեշտակիորեն մեծացել է: Եթե 1994 թ. ՀՀ առևտրային բանկերի սեփական կապիտալի ընդհանուր գումարը կազմել է 2289,95 մլն դրամ, ապա 2004 թվականի վերջին՝ 64631,0 մլն դրամ: Այսինքն՝ աճել է 62341,11 մլն դրամով: Ընդ որում, ՀՀ բանկային համակարգի կառուցվածքում առանձնանում են ոչ միայն դեռևս խորհրդային տարիներին գործող և հետո միայն առևտրայինի վերածված բանկերը, ինչպիսիք են՝ Արդշինբանկը, Հայէկոնոմբանկը, Հայխնայբանկը, Հայներարտբանկը, այլ նաև բոլորովին նոր, վերջին տասնամյակում ստեղծված բանկերը, որոնք արդեն հաստատուն տեղ են զբաղեցնում ՀՀ բանկային համակարգում: Այդ բանկերից են՝ Կոնվերս բանկը, Ինեկոբանկը, Արցախբանկը, Անելիք բանկը, HSBC բանկը և այլն: Այս նոր բանկերի սեփական կապիտալը զգալի բաժին է կազմում ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր կապիտալի կառուցվածքում (տե՛ս ստորև բերված աղյուսակը):

Աղյուսակ 1

Մի քանի նոր առևտրային բանկերի սեփական կապիտալի տեսակարար կշիռը ՀՀ առևտրային բանկերի համանման ընդհանուր ցուցանիշների կառուցվածքում՝ 2004 թ. վերջի դրությամբ

1. Կոնվերս բանկ	9,4
2. Ինեկոբանկ	4,6
3. Արցախբանկ	4,0
4. Անելիք բանկ	5,0
5. HSBC բանկ	8,4
	31,4 %

Ինչպես ցույց են տալիս աղյուսակի տվյալները, 2004 թվականի վերջի դրությամբ, նշված հինգ նոր առևտրային բանկերի կանոնադրական կապիտալը կազմում է հանրապետության ամբողջ առևտրային բանկերի կապիտալի ավելի քան մեկ երրորդը: Նույն բանկերի նվաճումներն ավելի ակնառու են ակտիվների աճի առումով: Այդ են վկայում աղյուսակ 2-ի տվյալները:

Աղյուսակ 2³

*Նոր առաջավոր հինգ առևտրային բանկերի ակտիվների բաժինը
 ԴՅ առևտրային բանկերի ակտիվների ընդհանուր կառուցվածքում*

N	Բանկերի անվանումը	Տեսակարար կշիռը ԴՅ առևտրային բանկի ակտիվի ընդհանուր ծավալով
1.	Կոնվերս բանկ	8,8
2.	Ինեկոբանկ	3,0
3.	Արցախբանկ	6,5
4.	Անելիք բանկ	4,1
5.	HSBC բանկ	17,7
	ԴՅ առևտրային բանկեր	100

Բերված տվյալները ցույց են տալիս, որ նշված հինգ առևտրային բանկերի ակտիվների բաժինը ԴՅ առևտրային բանկերի ակտիվների ընդհանուր կառուցվածքում, 2004 թվականի վերջի դրությամբ, կազմում է 40 %:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության տնտեսական աճին զուգընթաց շարունակ մեծանում են նաև բանկային համակարգի զարգացման հնարավորությունները, մեծանում է նաև ռեսուրսային բազան: Հատկապես վերջին տարիներին կտրուկ աճել է բանկային ծառայությունների նկատմամբ պահանջարկը, ընդլայնվել է նրանց հաճախորդների բազան, սպասարկման կուլտուրան և արդյունավետությունը: Այս պայմաններում սրվում է նաև մրցակցությունը բանկային համակարգում, ինչը պահանջում է կառավարման նոր ձևերի ու մեթոդների արմատավորում: Թե որքանով են կառավարման ընտրված ձևերն ու մեթոդները համապատասխանում զարգացման նոր փուլի պահանջներին, դրանից է կախված առևտրային

³ Աղյուսակը կազմված է մեր կողմից՝ «Հայաստանի բանկերի հիմնական ցուցանիշները» ԱՌԿԱ գործակալության 2004-2005թթ. ֆինանսատնտեսական տեղեկագրի տվյալների հիման վրա:

բանկերի գործունեության արդյունավետության մակարդակը: Նշված հարցերը յուրաքանչյուր բանկ լուծում է յուրովի՝ ելնելով իր ֆինանսական հնարավորություններից և ընտրած մարտավարությունից:

Վերջին տարիներին հանրապետության առևտրային բանկերի գործունեությունն ընթացել է սուր մրցակցային պայքարի պայմաններում: Ավելին, նախորդ տարիներին սկսված մրցակցությունը շարունակում է զարգանալ որակական նոր մակարդակում: Սա դրսևորվում է նրանում, որ նկատելիորեն փոխվել է բանկերի վարքագիծը. դարձել է ավելի «ագրեսիվ»՝ ռեսուրսային բազայի տեղաբաշխման ու ընդլայնման բնագավառում:

Հանրապետության մակրոտնտեսական ցուցանիշների բարելավումը բարենպաստ պայմաններ ստեղծեց բանկային համակարգի զարգացման համար: Մասնավորապես, սա արտահայտվեց նրանում, որ սկսեց աճել միջին ժամկետայնության և երկարաժամկետ ներդրումների ծավալը, ինչը առևտրային բանկերի գործունեության առավել ստվերոտ կողմն է:

2004 թվականին առևտրային բանկերի աշխատանքի ավանդական մեթոդները վերջնականապես իրենց տեղը զիջեցին առավել հեռանկարային մեթոդներին, որոնց շնորհիվ աճեցին ոչ միայն ներդրումները տնտեսության մեջ, այլև բանկերի կազմակերպչական ճկունությունը: Ջգալիորեն աճեցին պլաստիկ քարտերի քանակը և այդ քարտերով սպասարկման կետերը, ավելի ընդլայնվեց հեռակառավարման սպասարկման համակարգը (բանկ-հաճախորդ), կոմունալ վճարումների համակարգի ինտեգրումը բանկային համակարգին: Սկսեցին կիրառվել պահանջների ֆինանսավորման ու վարկավորման (ֆակտորինգ) նոր տեխնոլոգիաներ՝ հենվելով նոր ծրագրային ապահովմանության վրա: Ընդլայնվեց բանկային ռիսկերի բազմազանեցումը՝ սպասարկման ծառայությունները տարածելով մանրածախ ոլորտում:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության տնտեսական աճի ցուցանիշների բարելավումը նպաստավոր պայմաններ ստեղծեց նաև բանկային համակարգում առևտրային բանկերի ֆինանսական կայունության մակարդակի բարձրացման համար: Այդ մասին են վկայում շահույթով աշխատող առևտրային բանկերի թվաքանակի աճը և դրանց շահութաբերության մակարդակի բարձրացումը: Այսպես. 2004 թվականի վերջի դրությամբ հանրապետու-

թյունում գործող 19 առևտրային բանկերից շահույթով են աշխատել 16-ը⁴:

Աղյուսակ 3

ՀՀ առևտրային բանկերի՝ 2004 թվականի շահութաբերության մակարդակը ըստ ակտիվների և սեփական կապիտալի

N	Բանկի անվանումը	Շահութաբերությունը	
		ըստ ակտիվների	ըստ սեփական կապիտալի
1.	Արդշինինվեստբանկ	1,1	8,0
2.	Կոնվերս բանկ	1,2	6,7
3.	HSBC բանկ	1,1	13,8
4.	Ինեկոբանկ	3,5	13,5
5.	Հայէկոնոմբանկ	0,9	6,2
6.	Հայխնայբանկ	0,4	5,4
7.	Արցախբանկ	0,7	7,2
8.	Անելիք բանկ	1,1	5,5
9.	Հայգյուղփոխբանկ	0,4	1,4
10.	Հայմեքարտբանկ	0,5	2,3
11.	Պրոմեթեյ բանկ	0,6	1,1
12.	ԻԹԲ բանկ	0,2	0,3
13.	Էմպորիկիբանկ	0,8	0,6
14.	Զարգացման հայկական բանկ	0,1	0,2
15.	Առեկսիմբանկ	0,1	0,2
16.	Մելլաթ բանկ	0,03	0,2
17.	Հայինվեստբանկ	0,04	0,18

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ հանրապետության առևտրային բանկերում, հատկապես ըստ ակտիվների, տնտեսական շահութաբերության մակարդակը դեռևս չի գտնվում բավարար մակարդակի վրա, իսկ Միջինվեստ բանկը և Յունիբանկը վնասով են աշխատել: Սակայն, այնուամենայնիվ, մենք սա նվաճում ենք դիտում, նկատի ունենալով, որ նախկինում շահույթով չէր աշխատում հանրապետության առևտրային բանկերի մեծամասնությունը:

⁴ ԱՌԿԱ գործակալության 2004-2005թթ. ֆինանսատնտեսական տեղեկատուի տվյալներով:

Վիճակը համեմատաբար բարվոք է ըստ սեփական կապիտալի շահութաբերության: Այստեղ, ինչպես վկայում են աղյուսակի տվյալները, կան մի շարք բանկեր, որոնց շահութաբերության մակարդակը ընդունելի է: Նման առևտրային բանկերից հատկապես կարելի է առանձնացնել HSBC բանկը և Ինեկոբանկը, որոնց շահութաբերության մակարդակները համապատասխանաբար կազմել են՝ 13,8 % և 13,5 %: Այնուհետև հիշատակության են արժանի Արցախբանկը, որի շահութաբերության մակարդակը կազմել է 7,3 %, Կոնվերս բանկը՝ 6,7 %, Հայէկոնոմբանկը՝ 6,2 %: Հայխնայբանկի և Անելիք բանկի՝ ըստ սեփական կապիտալի շահութաբերության մակարդակները համապատասխանաբար կազմել են՝ 5,4 % և 5,5%:

Հանրապետության առևտրային բանկերի ֆինանսական կայունության վրա էական ազդեցություն է գործում, այսպես կոչված, կապիտալի բազմարկչի (մուլտիպլիկատորի) ցուցանիշի մակարդակը, որը ներկայացնում է ակտիվների ու սեփական կապիտալի հարաբերությունը: Այս ցուցանիշի նշանակությունն այն է, որ ցույց է տալիս, թե որչափ արդյունավետ է օգտագործվել առևտրային բանկերի սեփական կապիտալը: Որոշակի իմաստով, այս ցուցանիշը հիշեցնում է տնտեսավարական սուբյեկտների «ֆինանսական լծակ» ցուցանիշը: Տարբերությունն այն է, որ վերջին դեպքում խոսքը վերաբերում է սեփական ու փոխառու կապիտալների օպտիմալ հարաբերակցություն սահմանելու միջոցով սեփական կապիտալի շահութաբերության բարձրացմանը, իսկ առևտրային բանկերում կապիտալի կառավարման արդյունավետության բարձրացումը պետք է ձեռք բերվի սեփական կապիտալի և ակտիվների միջև օպտիմալ հարաբերակցություն սահմանելու միջոցով: Հարցն այն է, թե սեփական կապիտալի յուրաքանչյուր միավորը քանի միավոր ակտիվներ է ապահովել, ինչպիսին է դրանց օգտագործման արդյունավետությունը:

ՀՀ առևտրային բանկերի կապիտալի բազմարկչի ցուցանիշի մասին պատկերացում կտան ստորև բերված աղյուսակի տվյալները:

Աղյուսակ 4

ՀՀ առևտրային բանկերի կապիտալի բազմարկչի (ակտիվների և սեփական կապիտալի հարաբերակցությունը) ցուցանիշները 2004 թվականին⁵

N	Բանկերի անվանումը	Կապիտալի բազմարկիչը
1.	HSBC բանկ	12,3
2.	Արդշինհիմնվեստբանկ	7,0
3.	Կոնվերս բանկ	5,5
4.	Ինտելոբանկ	3,8
5.	Հայէկոնոմբանկ	6,9
6.	Հայխնայբանկ	11,08
7.	Արցախբանկ	9,4
8.	Անելիք բանկ	4,8
9.	Հայգյուղփոխբանկ	4,0
10.	Հայներարտբանկ	4,5
11.	Պրոմեթեյ բանկ	1,2
12.	ԻԹԲ բանկ	1,6
13.	Էնպորիկիբանկ	0 - 4,3
14.	Զարգացման հայկական բանկ	3,7
15.	Առէկսիմբանկ	3,4
16.	Մելլաթ բանկ	4,9
17.	Հայինվեստբանկ	4,3
18.	Միջինվեստբանկ	1,2
19.	Յունիբանկ	4,38
	Ընդամենը	5,6

Մեր հաշվումներով, Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերում, միջին հաշվով, սեփական կապիտալի հատույցը (կապիտալի բազմարկիչը) կազմել է 5,6:

Բերված աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում քիչ չէ այն առևտրային բանկերի քանակը, որոնց սեփական կապիտալի հատույցը գտնվում է քավարսի մակարդակի վրա: Այդ բանկերից են HSBC բանկը, որի կապիտալի բազմարկիչը 2004 թվականի վերջին կազմել է 12,3: Այդ նույն ցու-

⁵ Ցուցանիշները դուրս են բերվել ԱՌԿԱ գործակալության 2004-2005թթ. տեղեկագրի տվյալների հիման վրա:

ցանիչը Հայինայբանկում կազմել է 11,08, Արցախբանկում՝ 9,4, Արղշինի միավեստբանկում՝ 7,0, Հայէկոնոմբանկում՝ 6,9, Կոնվերս բանկում՝ 5,5 և այլն:

Սակայն զգալի է նաև այն բանկերի թվաքանակը, որոնց սեփական կապիտալի հատույցը բավականին ցածր է: Այսպես, մեկ միավոր սեփական կապիտալի հաշվով, ակտիվների բաժինը կազմել է. Միջինվեստ և Պրոմթեյ բանկերում՝ 1,2, ԻԹԲ բանկում՝ 1,6, Առէկ-սիմբանկում՝ 3,4, Հայինվեստբանկում՝ 4,3 դրամ և այլն:

Նույն 2004 թվականի վերջի դրությամբ հանրապետության առևտրական բանկերում կուտակված շահույթի ծավալը կազմել է ավելի քան 14.949 մլն դրամ, ինչը, նախորդ տարվա համեմատությամբ, աճել է մոտ 2 անգամ (1-1,96 %): Սա վկայում է այն մասին, որ վերջին տարիներին էապես բարձրացել են առևտրային բանկերի ֆինանսական արդյունքները:

Այժմ համառոտակի ներկայացնենք առևտրային բանկերի գործառույթները, որոնք այսօր հատկանշական են ոչ միայն ազգային, այլ նաև արտասահմանյան և հատկապես զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրների առևտրային բանկերի համար, ինչպես նաև դրանց իրականացման գործընթացում նկատվող միտումները: Նախ նշենք, որ առևտրային բանկերը ցանկացած երկրի վարկային համակարգի միջուկն են ներկայացնում, որոնց միջոցով է համակարգվում վարկային ռեսուրսների հիմնական մասը: Առևտրային բանկերի միջոցով է տեղի ունենում վարկերի տրամադրումը, դեպոզիտների ընդունումը, իրականացվում են հաշվարկները ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց միջև, արժեթղթերի և տարադրամի առք ու վաճառքը, դրանց պահպանումը և այլն:

Համարվելով առևտրային կազմակերպություն՝ առևտրային բանկերը շուկայական տնտեսության ակտիվ տարրն են: Սա պայմանավորված է նրանով, որ նախ հավաքագրելով ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամանակավորապես ազատ դրամական միջոցները և դրանք տրամադրելով այդ միջոցների կարիքը զգացող ձեռնարկություններին, կազմակերպություններին՝ ժամանակավոր օգտագործման, դրանով իսկ նպաստում են ընդլայնված վերարտադրության անընդհատությանը՝ որպես միջնորդ հանդես գալով փոխադարձ վճարումների ու հաշվարկների կատարման գործընթացում:

Մյուս կողմից՝ առևտրային բանկերը կարելի է դիտել որպես ֆինանսական ձեռնարկություն, որոնք կենտրոնացնում են ժամանակավորապես ազատ դրամական միջոցները (ավանդները), դրանք

տրամադրում ժամանակավոր օգտագործման՝ վարկերի կամ փոխառվությունների տեսքով: Թեև առևտրային բանկերը անմիջականորեն դրամական հոսքեր չեն ստեղծում, սակայն շուկայական տնտեսության մեջ հանդես են գալիս որպես ազգային և միջազգային տնտեսական կապերի ամրապնդման ու զարգացման ակտիվ մասնակից՝ ստեղծելով գործարար կապեր շուկայական հարաբերություններ ունեցող տնտեսավարական սուբյեկտների և նույնիսկ պետությունների միջև:

Եվ, վերջապես, առևտրային բանկերը որոշակի պայմանականություններով հանդերձ, կարելի է համարել նաև սոցիալ-տնտեսական ճյուղ այնքանով, որքանով ճկուն կերպով արձագանքում են ցանկացած փոփոխություններին, որոնք տեղի են ունենում ինչպես տվյալ երկրի տնտեսական, այնպես էլ քաղաքական կյանքում:

Առևտրային բանկերի էությունը և տնտեսական ուղղվածությունը դրսևորվում են համապատասխան գործառույթների մեջ: Դրանք են.

- դրամական կապիտալի հավաքագրումը և կենտրոնացումը,
- վարկերի տրամադրումը,
- վարկային փողի ստեղծումը,
- հաշվարկների և վճարումների իրականացումը տնտեսության մեջ,
- արժեթղթերի թողարկման ու տեղաբաշխման կազմակերպումը,
- խորհրդատվական ծառայությունների մատուցումը:

Դրամական կապիտալի հավաքագրումը առևտրային բանկերի ավանդական և հնագույն գործառույթներից մեկն է: Սրա առավելությունն այն է, որ, ընդգրկելով տնտեսավարական սուբյեկտների և բնակչության ժամանակավորապես ազատ դրամական միջոցները, դրանց տերերին դրանով իսկ ապահովում են լրացուցիչ եկամտով՝ տոկոսի տեսքով, և, մյուս կողմից՝ եկամուտ է ստեղծվում նաև բանկերի համար՝ վարկային գործառնություններ իրականացնելու դիմաց: Հենց բանկերի միջոցով է իրականացվում դրամական միջոցների կենտրոնացումը և վերածումը կապիտալի:

Վարկ տրամադրելու համար միջնորդ հանդես գալը նույնպես առևտրային բանկերի կարևոր գործառույթներից է: Հարցն այն է, որ հատկապես ներկա ժամանակաշրջանում ուղղակի տնտեսական կապերի իրականացումը ազատ դրամական միջոցներ ունեցող և դրանց կարիքը զգացող տնտեսավարական սուբյեկտների միջև գրեթե անհնար է այնքանով, որքանով չեն համընկնում փոխառվության նպատակով առաջարկվող միջոցների և ազատ դրամա-

կան միջոցների ծավալները և ժամկետները: Այդ դժվարությունները հաղթահարվում են առևտրային բանկերի միջոցով: Դրանով բանկային վարկը ուղղվում է տնտեսության տարբեր ճյուղեր և նպաստում վերարտադրության անընդհատությանը: Բանկերի միջոցով վարկ է տրամադրվում նաև բնակչությանը՝ հատկապես սպառողական նպատակներով:

Առևտրային բանկերի հաջորդ, կարելի է ասել՝ հատուկ գործառույթներից մեկը վարկային փողի ստեղծումն է: Վերջինս հանդես է գալիս բանկային դեպոզիտների տեսքով, որը օգտագործվում է չեկերի, քարտերի, էլեկտրոնային փոխանցումների օգնությամբ: Ընդ որում, տեղի է ունենում դրամական զանգվածի ծավալի մեծացում շրջանառության մեջ: Ներկայումս արևմտյան զարգացած երկրներում առևտրային բանկերը փողի գլխավոր էմիտենտներ են: Ուստի, ազգային կենտրոնական բանկերը կարգավորում են դրամական էմիսիայի գործընթացները՝ ներգործելով դրանց գործառնությունների ծավալների ու բնույթի վրա:

Տնտեսության մեջ հաշվարկների ու վճարների իրականացումը առևտրային բանկերի ևս մեկ կարևոր գործառույթ է: Նախ՝ բանկերը հանդես են գալիս որպես միջնորդ՝ վճարումների իրականացման համար: Ընդ որում, դա կատարում են հաճախորդների համաձայնությամբ: Դրան համապատասխան, մի կողմից կատարում են վճարումներ և մյուս կողմից՝ միջոցներ են ներառում հաճախորդի հաշվում, վարում են դրամական մուտքերի հաշվառում և տրամադրում:

Վերջին տարիներին նկատվում են վճարային համակարգի կատարելագործմանն ուղղված նորարարություններ գրեթե բոլոր երկրներում, ինչը բարձրացնում է այդ համակարգի արդյունավետությունը: Հատկապես զարգացած բանկային համակարգ ունեցող երկրներում կիրառվում են նոր հաշվարկային համակարգեր: Մասնավորապես, խոշոր առևտրային բանկերը սկսել են կիրառել քլիրինգային համակարգ, ինչը թույլ է տալիս իրականացնել քլիրինգային ստուգարքներ երկրի վճարումների զգալի մասի առնչությամբ:

Վճարումների համակարգի կատարելագործմանն ուղղված նորմաներ իրականացվում են նաև Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերում: Օրինակ՝ Կոնվերս Բանկը 2004 թվականին սկսել է կիրառել, այսպես կոչված, Converse Transter համակարգը, որը հնարավորություն է տալիս ֆիզիկական անձանց արագ փոխանցումներ կատարելու արտասահմանյան մի շարք երկրներ (Ռուսաստան, Թուրքիա, Սերբիա և Չեռնոգորիա, Ուկրաինա, Մոլ-

ղովա), ինչպես նաև Արցախ: Նույն նպատակին է ծառայում նաև Western Union համակարգը: Կիրառվում է նաև հեռահաղորդակցության նոր համակարգ (internet-banking, fax-banking), որով սպասարկվում են հաճախորդների հաշիվները: Կատարվել են նաև այլ նորամուծություններ:

Վճարումների համակարգի բարելավմանն ուղղված միջոցառումները հանգեցնում են շրջանառության ծախսերի նվազեցմանը, իսկ հաշվարկների արագության ու հուսալիության բարձրացման նպատակով արձատավորվում է հաշվարկների էլեկտրոնային համակարգ:

Արևմտյան զարգացած բանկային համակարգ ունեցող երկրներում առևտրային բանկերը իրականացնում են նաև արժեթղթերի առաջնային և երկրորդային շուկաներ արժեթղթերի թողարկման կազմակերպման գործառույթ: Իրենց հաճախորդների համար կազմակերպելով բաժնետոմսերի ու պարտատոմսերի թողարկում ու տեղաբաշխում՝ առևտրային բանկերը հնարավորություն են ստանում կապիտալն ուղղելու արտադրական ոլորտ: Դրանով արժեթղթերի շուկան նպաստում է վարկային մեղրությունների ծավալի մեծացմանը:

Վերջապես՝ առևտրային բանկերի գործառույթների շարքում իր ուրույն տեղն է գրավում խորհրդատվական ծառայությունների մատուցումը:

Խորհրդատվական ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ անընդհատ ընդլայնվում է բանկերի հաճախորդների տեղաբաշխման աշխարհագրությունը, մեծանում թվաքանակը և, մյուս կողմից, շարունակ ստեղծվում են ծառայությունների նոր տեսակներ, որոնց էության ու բովանդակության մասին դեռևս հաճախորդները հստակ պատկերացում չունեն: Ընդարձակ են մատուցվող ծառայությունների հետ կապված հարցերի շրջանակները: Մասնավորապես՝ ինչպես բարձրացնել վարկունակությունը, ստանալ լիզինգային վարկեր, կիրառել հաշվարկների նոր ձևեր, օգտվել պլաստիկ քարտերից: Ավելի հաճախ տնտեսավարական սուբյեկտները դիմում են բանկերին՝ հաշվապահական հաշվետվություններ պատրաստելու վերաբերյալ խորհրդատվություն ստանալու նպատակով: Վերջին տարիներին մեծ է հետաքրքրությունը տեղեկատվական ծառայությունների նկատմամբ, որոնք առավելապես կապված են այս կամ այն բնագավառների վերաբերյալ տվյալների հավաքագրման, մշակման ու ներկայացման հետ: Հաճախորդներին հետաքրքրում են նաև տեղեկություններ բանկային ծառայությունների շուկայի, բանկերի ակ-

տիվային ու պասիվային գործառնությունների իրականացման հետ կապված տոկոսադրույթների մասին և այլն:

Առևտրային բանկերի կողմից իրականացվող գործառնություններին համապատասխան ձևավորվում է դրանց կազմակերպչական կառուցվածքը: Դա ամրագրվում է Կանոնադրությամբ, որտեղ հստակ նշվում են բանկի կառավարման մարմինները, դրանց լիազորությունները, պատասխանատվությունը, ինչպես նաև փոխադարձ կապերը բանկային գործառնություններ իրականացնելիս:

Կանոնադրության համաձայն, առևտրային բանկերի կառավարման գլխավոր մարմինը համարվում է մասնակիցների (բաժնետերերի, փայատերերի) ընդհանուր ժողովը: Վերջինս հաստատում է բանկի կանոնադրությունը և անհրաժեշտության դեպքում փոփոխում այն: Ընտրում է տնօրենների խորհուրդ, հաստատում է տարեկան հաշվետվությունը, բաշխում է բանկի եկամուտները, ձևավորում է բանկի ֆոնդերը և կանոնակարգում բանկի գործունեության հետ կապված զանազան այլ հարցեր: Բաժնետերերի ընդհանուր ժողովը բանկի խորհրդի կողմից ընտրում է նախագահ, որը և ղեկավարում է բանկի գործադիր մարմինը՝ տնօրենների խորհուրդը:

Տնօրենների խորհուրդը կազմավորում է բանկի կառավարման բարձրագույն ֆունկցիոնալ ստորաբաժանումները, որոնք էլ իրականացնում են բանկի պրակտիկ գործառնությունները՝ ելնելով խորհրդի համապատասխան ցուցումներից և հրահանգներից:

Խորհրդի հիմնական գործառնություններից է բանկի ռազմավարական նպատակների ճշգրտումը և դրա հիման վրա գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ քաղաքականության մշակումը: Մասնավորապես՝ սահմանվում են վարկային, արտարժույթային, հաշվարկային քաղաքականություններ և այլն:

Առևտրային բանկերի կազմակերպչական կառուցվածքը շարունակ փոփոխվում և կատարելագործվում է՝ պայմանավորված դրանց գործառնությունների շրջանակների ընդլայնմամբ, որոնց հիման վրա առաջ են գալիս նոր խնդիրներ ու պահանջներ:

2. ԱՌԵՎՏՐՎԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՊԱՍԻՎԱՅԻՆ ԵՎ ԱԿՏԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Առևտրային բանկերի գործառնությունները ստորաբաժանվում են երկու խմբի. պասիվային և ակտիվային: Պասիվային գործառնությունների միջոցով բանկերը ձևավորում են իրենց ռեսուրսները,

իսկ ակտիվային գործառնությունների միջոցով տեղաբաշխում են դրանք: Պասիվային գործառնությունները, փաստորեն, պատմականորեն առաջնային են եղել ակտիվային գործառնությունների համեմատությամբ, այնքանով, որքանով վերջիններիս համար ելակետ են ծառայում պասիվային գործառնությունները:

Պասիվային գործառնություններին են վերաբերում, ամենից առաջ, սեփական կապիտալի ձևավորումը, ավանդների (դեպոզիտների) ընդունումը, հաճախորդների հաշիվների բացումը և վարումը, որոնց թվում նաև՝ թղթակցային բանկերի հաշիվները, միջբանկային վարկերի ստացումը: Դրանց կազմի մեջ մտնում են նաև կենտրոնացված վարկային ռեսուրսները, որոնք տրամադրում են ազգային կենտրոնական բանկերը, սեփական արժեթղթերի (պարտատոմսերի, դիպոզիտիվային և խնայողական հավաստագրերի) թողարկումը և այլն:

Բանկային նշված ռեսուրսների շարքում հատկապես կարևորվում են սեփական միջոցները (կապիտալը): Դրա մեծությունն է որոշում բանկի գործունեության իրավական հիմքերը և հանդիսանում զարգացման ֆինանսական բազան: Սեփական կապիտալի մեծությունից է կախված, թե որչափ է հնարավոր իրականացնել փոխհատուցումներ վարկառուներին և ավանդատուներին բանկի սնանկացման կամ վնասի առաջացման դեպքերում, լուծել առաջադրված խնդիրները և ապահովել գործառնությունների տեսակները՝ նախատեսված ծավալներով: Բանկի սեփական կապիտալի կառուցվածքում հատկապես առանձնանում են կանոնադրական ֆոնդը, գլխավոր պահուստը, վերագնահատման պահուստները, ինչպես նաև տարվա ընթացքում չբաշխված կամ կուտակված շահույթը:

Առևտրային բանկերի սեփական կապիտալի հիմքը կանոնադրական կապիտալն է: Դրա ծավալը, կազմավորման և փոփոխման կարգը որոշվում են բանկի Կանոնադրությամբ: Կապիտալի ծավալը օրենսդրությամբ չի սահմանափակվում: Սակայն կենտրոնական բանկերը սահմանում են նվազագույն ծավալ (նորմատիվ), որը չապահովելու դեպքում բանկն ընդհանրապես չի կարող գործել: 2005 թվականի հուլիսի 1-ից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից առևտրային բանկերի համար կանոնադրական կապիտալի նվազագույն ծավալը նախատեսված է 50 մլն դրամ, իսկ սեփական կապիտալինը՝ 2.400 մլն դրամ: Կանոնադրական ֆոնդերի նման ծավալը կարող է ապահովվել մասնակիցների՝ բաժնետերերի, փայտերերի ներդրումների հիման վրա:


Առևտրային բանկերը ձևավորում են գլխավոր պահուստ, որը նախատեսված է ծածկելու այն հնարավոր կորուստները, որոնք կարող են առաջանալ բանկերի կողմից իրականացվող տարբեր բնույթի գործառնություններ իրականացնելիս: Դրա մեծությունը սովորաբար սահմանվում է տոկոսներով՝ կանոնադրված կապիտալի մեծության նկատմամբ: Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերի համար ներկայումս սահմանված է 15-25 %: Պահուստային կապիտալի ձևավորման աղբյուր են ծառայում շահույթից կատարվող մասհանումները:

Ինչպես արդեն նշվեց, առևտրային բանկերը ձևավորում են նաև վերազնահատման պահուստներ, որոնք գոյանում են հիմնական միջոցների, արժեթղթերի վերազնահատման և հաշվեկշռի կոնսոլիդացման արդյունքում:


ժամանակակից պայմաններում առևտրային բանկերի ռեսուրսների կառուցվածքում սեփական միջոցները աննշան բաժին են կազմում: Արևմտյան զարգացած երկրներում սեփական միջոցների բաժինը բանկի ռեսուրսների կազմում չի գերազանցում 15-20 %-ը: Ենթադրվում է, որ սեփական միջոցների նման ծավալը լիովին բավարարում է ապահովելու բանկերի անխափան գործունեությունը և կայունությունը: Ռուսաստանի Դաշնության առևտրային բանկերի սեփական միջոցների բաժինը կազմում է ռեսուրսների 10%-ից ավելին: Այդ ցուցանիշը Հայաստանի Հանրապետությունում 2004 թվականին կազմել է 17,7 %:

Առևտրային բանկերի գործունեության առանձնահատկություններից է նաև այն, որ նրա ռեսուրսների ճնշող մասը գոյանում է ընդգրկված միջոցների հաշվին: Ընդ որում, միջոցներ հավաքագրելու բանկերի հնարավորությունները կարգավորում են ազգային կենտրոնական բանկերը՝ ելակետ ունենալով սեփական կապիտալի մեծությունը:

Առևտրային բանկերի միջոցները, ըստ էության, բաժնետերերի ունեցվածքն է, որն այլ կերպ անվանում են բանկի զուտ արժեք: Վերջինիս որոշման առավել տարածված ու ընդունելի եղանակը կատարվում է ըստ հաշվեկշռային արժեքի:



Առևտրային բանկերի ռեսուրսների հիմնական ծավալը ներգրավված և փոխառու միջոցներն են, որոնք գոյանում են այնպիսի գործառնությունների իրականացման շնորհիվ, որոնք ձևավորում են պասիվները: Ստորև ներկայացնում ենք առևտրային բանկերի ընդգրկված և փոխառու միջոցների կառուցվածքը:



Գծապատկեր 1. Ընդգրկված և փոխառու միջոցների կառուցվածքը

Շատ հեղինակներ այն կարծիքին են, որ առևտրային բանկերի ռեսուրսային բազայի ժամանակակից գնահատման մեխանիզմը այնքան էլ ճիշտ չի կառուցված և կատարելագործման կարիք ունի: Ներկայումս առևտրային բանկերի ֆինանսական վիճակը որոշում են՝ ելնելով ակտիվային գործառնություններ կատարելու հետ կապված ռիսկից և բանկային կապիտալի մակարդակից: Անկասկած, դրանք կարևոր նշանակություն ունեն: Սակայն հարկավոր է նաև

հաշվի առնել, որ բանկերի կայունությունը մեծ չափով կախված է նաև նրանց ռեսուրսային բազայի կայունությունից: Սա հատկապես կարևոր նշանակություն ունի շուկայական հարաբերությունների անցման շրջանում գտնվող առևտրային բանկերի համար: Արտասահմանյան, հատկապես զարգացած երկրներում, որտեղ բանկերը գործում են կայուն ֆինանսական շուկայի պայմաններում, կիրառվում է դեպոզիտների ապահովագրման համակարգ, որը մշտապես գտնվում է բանկային վերահսկողության ներքո: Այս պարագան կարևոր դեր է խաղում առևտրային բանկերի համար՝ ընդգրկելու երկարաժամկետ ռեսուրսներ և ապահովելու կայուն բանկային ռեսուրսների բարձր մակարդակ: Հարցն այն է, որ բանկերի վճարունակությունը որոշվում է ոչ այնքան վերադարձվող ակտիվների հոսքով, որքան վճարումների ծավալով, որը կարող է տեղի ունենալ վարկառուների պահանջով: Նման դեպքերում կարևոր է, թե ինչպիսին է բանկի ռեսուրսային բազան: Եթե դա հիմնականում բաղկացած է «կարճ» պասիվներից, ապա մեծ ծավալի վճարների անհրաժեշտության դեպքում բանկը կունենա լուրջ խնդիրներ: Ուստի անհրաժեշտ է, որ առևտրային բանկերը նախապես մտածեն և կայունացնեն իրենց ընթացիկ վճարումները, ինչպես նաև բազմազանեցնեն սեփական ռեսուրսային բազան: Այս իմաստով որոշակի հետաքրքրություն կներկայացնեն Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերի վերաբերյալ թիվ 5 աղյուսակի տվյալները:

Ինչպես ցույց են տալիս այդ տվյալները, 2004 և 2005 թվականների սկզբին ՀՀ առևտրային բանկերի ռեսուրսային բազայի կառուցվածքում սեփական միջոցների տեսակարար կշիռը կազմել է, համապատասխանաբար՝ 17,4 % և 17,7 %: Սա նշանակում է, որ ներգրավված միջոցներն էլ կազմել են, համապատասխանաբար՝ 82,6 % և 82,3 %: Սակայն առանձին առևտրային բանկերում նշված ցուցանիշները էականորեն տարբերվում են ոչ միայն միմյանցից, այլ նաև, ամբողջությամբ վերցրած, բանկերի ամփոփ ցուցանիշներից: Այսպես, պասիվների կառուցվածքում սեփական միջոցների բաժինը առավել բարձր է ԻԹԲ բանկում, որտեղ այդ ցուցանիշը, 2004 թվականի հունվարի 1-ի դրությամբ, կազմել է 72,1 %, իսկ 2005 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 62,2 %, սեփական միջոցների բաժինը, համապատասխանաբար, կազմել է՝ 27,9 % և 37,8 %:

Աղյուսակ 5

ՀՀ գործող առևտրային բանկերի սեփական և ներգրավված միջոցների հարաբերակցությունը 2004 և 2005 թվականների հունվարի 1-ի դրությամբ (տոկոսներով)⁶

N	Բանկերի անվանումը	2004 թվական		2005 թվական	
		Սեփական միջոցներ	Ներգրավված միջոցներ	Սեփական միջոցներ	Ներգրավված միջոցներ
1.	Հայգյուղփոխբանկ	30,6	69,3	24,7	75,3
2.	Անելիք բանկ	15,5	84,5	20,7	79,3
3.	Առեկսիմբանկ	23,5	76,5	29,4	70,6
4.	Արցախբանկ	14,8	85,2	10,6	89,4
5.	Արդշինհիմվեստբանկ	17,0	83,0	14,2	85,8
6.	Զարգացման հայկ. բանկ	20,0	80,0	26,2	73,8
7.	Էմպորիկիբանկ	23,1	76,9	23,3	76,7
8.	ԻԹԲ բանկ	72,1	27,9	62,2	37,8
9.	Ինեկորբանկ	24,3	75,7	26,0	74,0
10.	Կոնվերս բանկ	13,4	86,6	18,0	82,0
11.	Հայէկոնոմբանկ	16,0	84,0	14,4	85,6
12.	Հայինվեստբանկ	14,4	84,6	32,2	76,8
13.	Հայխնայբանկ	11,5	88,5	11,5	88,5
14.	Հայներարտբանկ	18,1	81,9	22,2	77,8
15.	HSBC բանկ	7,8	92,8	8,1	91,9
16.	Մելլաթ բանկ	25,7	74,3	20,5	79,5
17.	Միջինվեստբանկ	77,8	22,1	84,5	15,5
18.	Յունիբանկ	21,7	78,3	22,8	77,2
19.	Պրոմեթեյ բանկ	61,2	38,8	51,2	48,8
	Ընդամենը	17,4	82,6	17,7	82,3

Նույն ժամանակաշրջաններում գրեթե նույնն է վիճակը Միջին-վեստբանկում, որտեղ ակտիվների կառուցվածքում ներգրավված միջոցները կազմել են 77,8 % և 84,5%, իսկ սեփական միջոցները՝

⁶ Աղյուսակը կազմվել է «Հայաստանի բանկերի հիմնական ցուցանիշները» ԱՌԿԱ գործակալության 2004 - 2005 թթ. տեղեկագրի տվյալների հիման վրա:

22,1% և 15,5%, Պրոմթեյ բանկում ներգրավված միջոցները՝ 61,2 % և 48,8 %, սեփական միջոցները՝ 38,8 % և 51,2 %:

Անկասկած, սեփական և ներգրավված միջոցների այսպիսի կառուցվածքը նման բանկերում հեռու է բավարար լինելուց: Դա չի համապատասխանում ոչ միայն միջազգայնորեն ընդունված չափանիշներին, այլև ՀՀ առևտրային բանկերի միջին ցուցանիշներին: Նման վիճակը պայմանավորված է նրանով, որ հիշյալ բանկերը վարում են զգուշավոր և, կարելի է ասել նաև՝ գոյատևման քաղաքականություն, ինչի արդյունքում չափազանց ցածր է դրանց սեփական միջոցների օգտագործման մակարդակը: Այսպես, 2004 թվականի վերջի դրությամբ, մեր հաշվումներով, Պրոմթեյ բանկի զուտ շահույթը կազմել է ՀՀ առևտրային բանկերի նույն ցուցանիշի ընդամենը 1,3 %-ը, իսկ կուտակված շահույթի 0,2 %-ը, ԻԹԲ բանկինը, համապատասխանաբար, կազմել է 0,3 % և 0,7 %: Ինչ վերաբերում է Միջինվեստբանկին, ապա 2004 թվականին դրա գործունեությունը ավարտվել է վնասով:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ, այսօրվա դրությամբ, հանրապետության տարածքում գործող մի շարք առևտրային բանկեր 2004 թվականին իրենց գործունեությունը նույնպես ավարտել են վնասով: Այսպես, 2004 թվականը վնասով են փակել Էմպորիկիբանկը, որի կուտակված շահույթը կազմել է -788,2 մլն դրամ, Առէկսիմբանկը՝ -64,1 մլն դրամ, Մելլաթ բանկը՝ -748,9 մլն դրամ և Ջարգացման հայկական բանկը՝ 924,2 մլն դրամ: Այս բանկերում ակտիվների կառուցվածքում սեփական ու ներգրավված միջոցների հարաբերակցությունը կարելի է բավարար համարել: Ուստի, մեր կարծիքով, խնդիրն այն է, որ այս բանկերում բավարար մակարդակի վրա չի գտնվում մենեջերական աշխատանքը:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերի սեփական և ներգրավված միջոցների հարաբերակցությունը, ինչպես արդեն նշվեց, ենթարկվել է դրական փոփոխությունների, ինչի արդյունքում բարձրացել է միջոցների օգտագործման արդյունավետությունը: ՀՀ առևտրային բանկերի կողմից ստացված զուտ շահույթը 2003 թվականին կազմել է 3497,5 մլն դրամ, իսկ 2004 թվականին՝ 2980,3 մլն դրամ: Նույն թվականին, կուտակված շահույթը, համապատասխանաբար, կազմել է 7607,7 մլն դրամ և 14949,2 մլն դրամ:

Վերջին տարիներին ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետությամբ հատկապես կարելի է առանձնացնել հետևյալ առևտրային բանկերը.

- Արդշինհիմնվեստբանկը, որը 2004 թվականի վերջին ստացել է զուտ շահույթ՝ 435,6 մլն դրամ, կուտակված շահույթ՝ 2418,9 մլն դրամ. դրանք կազմում են ՀՀ առևտրային բանկերի կողմից ստացված զուտ շահույթի 14,6 %-ը և կուտակված շահույթի 16,2 %-ը:
- HSBC բանկը, որը նույն տարում ստացել է զուտ շահույթ՝ 751,4 մլն դրամ և կուտակված շահույթ՝ 2629,1 մլն դրամ. դրանց բաժինը ՀՀ առևտրային բանկերի համանման ցուցանիշների կառուցվածքում կազմել է, համապատասխանաբար՝ 25,2 % և 17,6 %:
- Կոնվերս բանկը ստացել է զուտ շահույթ՝ 401,7 մլն դրամ և կուտակված շահույթ՝ 3158,9 մլն դրամ, որոնք կազմել են ՀՀ առևտրային բանկերի համանման ցուցանիշների 13,5 % և 21,1 %:
- Հայէկոնոմբանկը ստացել է զուտ շահույթ՝ 247,2 մլն դրամ, կուտակված շահույթ՝ 1962, 0 մլն դրամ, որոնք կազմել են ՀՀ առևտրային բանկերի զուտ շահույթի 8,3 %-ը և կուտակված շահույթի 13,1 %-ը:
- Ինեկոբանկը ստացել է զուտ շահույթ՝ 398,6 և կուտակված շահույթ՝ 1802 մլն դրամ, որոնք կազմել են ՀՀ առևտրային բանկերի զուտ շահույթի 13,3 և կուտակված շահույթի 12,0 %-ը⁷:

Պասիվային գործառնությունների կառավարման հաջողությունները զգալիորեն պայմանավորված են այն հանգամանքով, թե առևտրային բանկերին իրենց գործունեության ընթացքում որքանով են կարողանում ճիշտ դասակարգել ներգրավված միջոցները: Արտասահմանյան փորձը հուշում է, որ այդ միջոցները պետք է ստորաբաժանել՝ ելնելով դրանց լուծարելիության սկզբունքից: Այդ նպատակով, ներգրավված միջոցները խորհուրդ է տրվում բաժանել երեք մասի, այն է՝ բացարձակ կայուն, կայուն և անկայուն:

Բացարձակ կայուն միջոցների կազմի մեջ հաշվի են առնում բանկերի սեփական միջոցները, որոշակի ժամկետում դեպոնավորված միջոցները և այլ բանկերից ստացված միջոցները: Կայուն միջոցների շարքն են դասվում այն բոլոր դեպոնավորված միջոցները, որոնց դինամիկան բանկի կողմից բավականին խորը ուսումնասիրված է, ինչը հնարավորություն է տալիս բանկի համար տիրապետելի միջին միջոցների ծավալը ցանկացած պահի ուղղելու որոշակի

⁷ Բոլոր ցուցանիշները հաշվված են «Հայաստանի բանկերի հիմնական ցուցանիշները» ԱՌԿԱ գործակալության ֆինանսատնտեսական 2004-2005 թթ. տեղեկագրի հիման վրա:

ակտիվներ: Ինչ վերաբերում է ոչ կայուն միջոցներին, ապա դրանք այն դեպքումավորված միջոցներն են, որոնք ստացվում են ժամանակ առ ժամանակ, ուստի դրանց դիմամիկան դժվար է կանխատեսել:

Պասիվային գործառնությունների իրականացման արդյունավետությունը ապահովելու տեսակետից կարևոր նշանակություն ունի առևտրային բանկերի վարկային պոտենցիալի որոշումը: Այդ պոտենցիալը կախված է հավաքագրված ամբողջ միջոցների և բանկային իրացվելիության համար կատարված պահուստների հարաբերակցությունից: Առևտրային բանկերի ռեսուրսային բազայի ձևավորման այս օրինաչափությունը հարկավոր է նկատի ունենալ, երբ անհրաժեշտություն է առաջանում կատարել ռեսուրսային բազայի օպտիմալ բաշխում:

Ռեսուրսների բաշխման բնագավառում առևտրային բանկերի քաղաքականության կարևորագույն խնդիրը միջոցների աղբյուրների և ակտիվների կառուցվածքների միջև համապատասխանության ապահովումն է: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ նշված համապատասխանությունը միշտ չէ, որ հնարավոր է լինում պահպանել, ինչն էլ դառնում է առևտրային բանկերի լուծարելիության խնդրի սրման հիմնական պատճառներից մեկը:

Առևտրային բանկերի ռեսուրսային բազայի կայունությունն ապահովվում է բազմաթիվ գործոնների օգնությամբ, որոնցից առավել կարևորներն են.

- Ներգրավված ռեսուրսների բաշխումն ըստ ժամկետայնության: Ընդ որում, առավել կայուն են դիտվում այն բանկերը, որոնք ունեն համեմատաբար ավելի երկարաժամկետ ռեսուրսային բազա:
- Ընդգրկված միջոցների հուսալիության ապահովումը: Դրա համար բանկերը պետք է միջոցներ ընդգրկեն տնտեսության տարբեր ճյուղերից և գործ ունենան բազմաթիվ տնտեսավարական սուբյեկտների և ֆիզիկական անձանց հետ:
- Ռեսուրսային բազայի վրա էական ազդեցություն է գործում բանկերի և դրանց հաճախորդների միջև փոխկախվածության աստիճանը:
- Հավաքագրված միջոցների դիմաց կուտակվող վճարումները և այլն:

Բազմաթիվ և բազմաբնույթ գործոնների առկայությունը առևտրային բանկերին ստիպում է ձևավորել պասիվների կառավարման օպտիմալ ռազմավարություն: Այդ ռազմավարությունը պետք է բխի այն նպատակներից, որը բանկը դրել է իր առջև, և համապատասխանի շուկայական իրադրությանը: Կարևոր է նաև հաշվի առնել,

թե ինչպես է կազմավորվում բանկի ռեսուրսների բազան, ինչ պասիվային գործառնություններ են իրականացվում և ինչպիսին են բանկի հնարավորությունները՝ պահպանելու իր իրացվելիությունը ժամանակի ցանկացած պահի:

Պասիվների կառավարման հիմնական ուղղությունները, նախևառաջ, պայմանավորված են այն միջոցների ամբողջությամբ, որոնք ձեռնարկվում են՝ ձևավորելու բանկի պասիվների հիմնական մասը, և բաղկացած են ընդգրկվող միջոցներից: Սա բավականին բարդ խնդիր է, որի լուծման համար հարկ կլինի մշակել որոշակի մարտավարություն, որը գործնականում կհանգեցնի պասիվների ցանկալի կառուցվածքի ձևավորմանը և կհամապատասխանի իրացվելիության և վճարունակության պահանջներին:

Այնուհետև, պասիվների կառավարման ուղղություններից մեկն էլ պետք է լինի զանազան ֆինանսական գործիքներ կիրառելու միջոցով լրացուցիչ միջոցներ ընդգրկելու հնարավորությունների նախատեսումը, երբ անհրաժեշտություն կառաջանա մարելու պարտավորությունները կարճ ժամկետում:

Եվ, վերջապես, պասիվների կառավարման արդյունավետությունը մեծ չափով կախված է այն բանից, թե ինչպես և ինչ չափերով է կազմավորվում բանկի սեփական կապիտալը: Հարցն այն է, որ հենց սեփական կապիտալի մեծությունից է կախված բանկի կայունության ապահովման խնդրի լուծումը, ինչն էլ հնարավորություն կտա հասնելու ֆինանսական գործունեության դրական արդյունքների:


Առևտրային բանկերի պասիվների ծավալը, դրանց կառուցվածքը և դինամիկան հնարավորություն կտան որոշելու պասիվների այս կամ այն խմբի ծավալի սպասվող փոփոխությունները: Եվ, նկատի ունենալով նաև երկրի ընդհանուր տնտեսական իրավիճակը, անհրաժեշտ է ճշգրտել այն գործոնները, որոնք կարող են ներգործել բանկերի պասիվային գործառնությունների իրականացման արդյունավետության վրա առաջիկայում և մոտ հեռանկարում:

Առևտրային բանկերի գործունեության արդյունավետությունը զգալի չափով պայմանավորված է նաև նրանով, թե ինչպես են տեղաբաշխվում հավաքագրված միջոցները, որոնք իրենց ամբողջությամբ մեջ կոչվում են ակտիվային գործառնություններ:

Միջազգային փորձը վկայում է, որ ակտիվների որակն այն հիմքն է, որի վրա ձևավորվում է առևտրային բանկերի կապիտալի բավարար մակարդակը, ինչը ֆինանսական ապահովման պարտադիր պայմանն է: Բավարար կապիտալի առկայությունը ոչ պակաս չափով կախված է հենց բանկի կողմից տեղաբաշխված միջոցների

հուսալիությունից: Եթե տեղաբաշխված միջոցները հուսալի են, ապա բանկը կարող է շարունակել իր կայուն գործունեությունը համեմատաբար պակաս կապիտալով, քան եթե տեղաբաշխումը տեղի ունենա բարձր ռիսկայնության պայմաններում, ինչը կարող է հանգեցնել կորուստների:

Ստորև ներկայացվում է առևտրային բանկերի ռեսուրսների տեղաբաշխման ընդունված կառուցվածքը.



Գծապատկեր 2. *Առևտրային բանկերի ռեսուրսների տեղաբաշխումը*

Առևտրային բանկերի ռեսուրսների տեղաբաշխումը, ինչպես ցույց է տալիս գծապատկերը, բազմաբնույթ է թե՛ իր տնտեսական նշանակության, թե՛ եկամուտ ապահովելու հնարավորության և որակի առումներով: Նախ նշենք, որ հավաքագրված միջոցների մի մասն ուղղված է պարտադիր պահուստներին, որոնք կոչված են ապահովելու բանկերի կայուն ու հուսալի գործունեությունը, բայց

եկամուտ չեն բերում: Տեղաբաշխման ենթակա ռեսուրսները կարող են լինել ինչպես բարձր եկամուտ ապահովող, այնպես էլ ռիսկային: Ուստի, յուրաքանչյուր առևտրային բանկ, ինքն է որոշում միջոցների օգտագործման ուղղությունները:

Առևտրային բանկերի հիմնական ակտիվային գործառնությունը պետք է համարել վարկավորումը: Բանկային հարաբերությունների բնագավառում որպես սուբյեկտ հանդես են գալիս տնտեսավարական սուբյեկտները, ամբողջ բնակչությունը, պետությունը, ինչպես նաև բանկերը: Պայմանավորված օգտագործման ժամկետներով՝ վարկը լինում է ցպահանջ և ժամկետային: Ընդ որում, պետք է նշել, որ ներդրումային նպատակով երկարաժամկետ վարկի տրամադրումը ավելի մեծ չափով է համապատասխանում ներդրողների աշխատանքային սկզբունքներին շուկայական հարաբերությունների պայմաններում, քան կապիտալ ներդրումների ֆինանսավորման մյուս աղբյուրները: Այս դեպքում գանձվող տոկոսադրույթը ավելի ցածր է, քան այն տոկոսադրույթները, որոնք սահմանվում են պետության կողմից առևտրային բանկերին պետական ֆինանսավորում տրամադրելիս:

Ստորև ներկայացված թիվ 6 աղյուսակի տվյալները ցույց են տալիս ՀՀ առևտրային բանկերի կողմից կատարված վարկային ներդրումների բաժինը ընդհանուր ակտիվների կառուցվածքում՝ 2004 թվականի հունվարի 1-ի դրությամբ:

Աղյուսակ 6

№		Ընդհանուր ակտիվներ	Վարկային ներդրումներ	Տեսակարար կշիռը ակտիվների կառուցվածքում (տոկոսներով)
1	2	3	4	5
1.	Հայգյուղփոխբանկ	17669,8	11759,3	66,5
2.	Աճելիք բանկ	14519,5	6836,2	47,1
3.	Առէկսիմբանկ	7968,5	2410,1	30,2
4.	Արցախբանկ	8985,5	4794,8	53,4
5.	Արդշինհիմվեստբանկ	21315,0	11140,2	52,3
6.	Զարգացման հայկ. բանկ	11278,5	3492,6	31,0
7.	Էնպորիկիբանկ	5710,8	2484,5	43,5
8.	ԻԹԲ բանկ	4150,9	1370,1	33,0
9.	Ինեկորբանկ	8196,7	2846,6	34,7
10.	Կոնվերս բանկ	25254,1	8986,8	35,6
11.	Հայէկոնոմբանկ	18917,4	8687,6	45,9
12.	Հայինվեստբանկ	9062,3	2988,4	33,0
13.	Հայխնայբանկ	23274,7	11603,3	49,8
14.	Հայներարտբանկ	13689,5	5141,9	37,6
15.	HSBC բանկ	67228,2	4727,5	7,0
16.	Մելլաթ բանկ	5974,0	92,7	1,5
17.	Միջինվեստբանկ	1561,5	402,7	25,8
18.	Յունիբանկ	13727,4	6083,1	44,3
19.	Պրոմեթեյ բանկ	4737,9	773,0	16,3

Ինչպես ցույց են տալիս աղյուսակի տվյալները, 2004 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում առևտրային բանկերի կողմից կատարված վարկային ներդրումները ընդհանուր ակտիվների կառուցվածքում կազմել են 34,1%: Մի շարք առևտրային բանկերում վարկային ներդրումների բաժինը շատ ավելի մեծ է: Այսպես, Հայգյուղփոխբանկում դա կազմել է 66,5%, Արցախբանկում՝ 53,4%, Արդշինհիմվեստբանկում՝ 53,2%, Հայխնայբանկում՝ 49,8 % և այլն: Սակայն դրանց կողքին կան առևտրային բանկեր,

որոնց կողմից իրականացված վարկային ներդրումների ծավալը կարելի է համարել անբավարար: Այդ բանկերից են Սելլաթ բանկը, որտեղ վարկային ներդրումների բաժինը ակտիվների կառուցվածքում կազմել է ընդամենը 1,5 %, Պրոմեթեյ բանկում՝ 16,3 % և այլն:

Վարկային ներդրումների ծավալը որոշակիորեն բարձրացել է 2004 թվականի ընթացքում: Տարեվերջին, նախորդ տարվա համեմատությամբ, բարձրացել է, մեր հաշվումներով, 1,8%-ով և ակտիվների կառուցվածքում կազմել 35,9 %⁸:

Բանկային վարկը չունի որոշակի ապահովվածություն և, այդ պատճառով, տրամադրվում է առաջնակարգ վարկունակություն ունեցող հաճախորդներին, որոնց հետ բանկը պահպանում է տևական կապեր և չունի որևէ լուրջ տարածայնություն նախկինում տրամադրված վարկերի վերաբերյալ: Սովորաբար կարճաժամկետ վարկի առնչությամբ սահմանվում է ավելի բարձր տոկոսադրույք, քան այլ վարկերի գծով:

Բանկային վարկը, ըստ մարման հերթականության, կարելի բաժանել երկու խմբի: Առաջին խմբի մեջ են մտնում միաժամանակյա մարվող վարկերը, իսկ երկրորդի մեջ՝ հետաձգմամբ մարվող վարկերը: Սովորաբար կարճաժամկետ վարկը տրամադրվում է իրավաբանական և ֆիզիկական անձանց, ովքեր կանխիկ դրամի կարիք են զգում՝ իրենց ընթացիկ պահանջները բավարարելու համար: Նման դեպքերում կիրառվում է միաժամանակյա մարման ենթակա վարկ, երբ մարվում են հիմնական պարտքը և միասնական գումարի տոկոսները՝ հենց որ ավարտվում է վարկի ժամկետը: Հետաձգվող մարման ենթակա են համարվում այն փոխատվությունները, որոնց մարումը իրականացվում է երկու և ավելի վճարումների միջոցով (որպես կանոն՝ վճարումները տեղի են ունենում ամսական, եռամսյակը մեկ կամ յուրաքանչյուր կիսամյակ): Այս խումբն ընդգրկում է ամենատարբեր տեսակի վարկերը, այդ թվում՝ ֆակտորինգը, լիզինգը, հիպոթեքը և այլն:

Առևտրային բանկերի վարկավորման պրակտիկայում կիրառվում են երկու տեսակի տոկոսադրույքներ՝ հաստատագրված և «լուղացող»: Առաջին դեպքում տոկոսադրույքը սահմանվում է վարկավորման ողջ ժամանակաշրջանի համար և վերանայման ենթակա չէ: Փոխառուն պարտավորվում է վճարել տոկոսները համաձայնեցված անփոփոխ դրույքաչափով՝ անկախ շուկայական իրադրու-

⁸ Բոլոր տվյալները վերցված են «Հայաստանի բանկերի հիմնական ցուցանիշները» ԱՌԿԱ գործակալության 2004-2005թթ. ֆինանսատնտեսական հաշվետվություններից:

թյան փոփոխություններից: Սրա առավելությունն այն է, որ, ինչպես բանկը, այնպես էլ փոխառուն հնարավորություն ունեն հստակ հաշվարկելու իրենց եկամուտները և ծախսերը, որոնք կապված են տրամադրված վարկի օգտագործման հետ: Հաստատագրված վարկային տոկոսադրույքները, որպես կանոն, կիրառվում են կարճաժամկետ վարկավորման ժամանակ: Ներկայումս Հայաստանի առևտրային բանկերը առավելապես կիրառում են հաստատագրված վարկային տոկոսադրույքներ: Միաժամանակ պետք է նշել, որ շուկայական զարգացած տնտեսություն ունեցող երկրներում լայնորեն օգտագործվում են ինչպես հաստատագրված, այնպես էլ «լողացող» տոկոսադրույքներ:

«Լողացող» տոկոսադրույքների էությունն այն է, որ դրույքները շարունակ փոփոխվում են կախված վարկային շուկայում ստեղծված իրադրությունից:

Բանկային վարկավորումը իրականացվում է վարկավորման սկզբունքների խստիվ պահպանմամբ: Այդ սկզբունքներն են ժանկետայնությունը, ապահովվածությունը, վճարելիությունը, վերադարձելիությունը, ինչպես նաև վարկային ծրարի բազմազանեցումն ըստ տարբեր ժամկետների հաճախորդների: Գործնականում նշված սկզբունքների պահպանումը հնարավորություն է տալիս ապահովելու վարկային գործարքի կողմերի շահերը: Դրան նպաստում է նաև վարկավորման մեթոդների կիրառումը, որի օգնությամբ էլ կատարվում են վարկի տրամադրումը և մարումը: Ներկայումս կիրառվում են վարկավորման երկու մեթոդներ: Դրանցից մեկը կոչվում է նպատակային փոխատվություն, իսկ մյուսը՝ փոխատվություն հաշվարկային հաշվից՝ ըստ վճարային փաստաթղթերի ստացման, վարկավորման լիմիտի սահմաններում, ինչը գործնականում ստացել է օվերդրաֆտ անվանումը:

Առաջին մեթոդի էությունն այն է, որ վարկը տրամադրվում է հաճախորդի՝ ֆինանսական ռեսուրսների նկատմամբ պահանջները բավարարելու համար՝ որպես ժանկետային փոխատվություն, որը վերսկսվում է վարկը մասամբ մարելու դեպքում՝ վարկավորման սահմանված լիմիտի սահմաններում, կամ էլ չի վերսկսվում, երբ վարկի մասնակի մարում տեղի չի ունեցել: Այդ դեպքում վարկավորումը դադարեցվում է մինչև պարտքի լրիվ մարումը:

Վարկավորման երկրորդ մեթոդի դեպքում փոխատվությունը տրամադրվում է բանկի կողմից սահմանված օվերդրաֆտի լիմիտի սահմաններում: Այդ լիմիտը օգտագործվում է հաճախորդի կողմից, երբ անհրաժեշտության դեպքում ներկայացվում են վճարման փաստաթղթեր հաշվարկային հաշվից ժամանակի որոշակի հատ-

վածում վճարումներ կատարելու համար: Այս վարկը չունի նպատակային բնույթ և ինչ-որ չափով հիշեցնում է նախկինում կիրառվող ըստ շրջանառության վարկավորումը:

Վարկավորման մեթոդի միջոցով է որոշվում վարկային հաշվի տեսակը, որը օգտագործվում է վարկի տրամադրման և օգտագործման համար: Վարկավորման ցանկացած մեթոդի դեպքում վարկառուի համար բացվում է հասարակ վարկային հաշիվ, որը որոշակիորեն կապված է հաշվարկային հաշվի հետ, ինչը բարձրացնում է հաճախորդի պատասխանատվությունը ստացված միջոցների օգտագործման նկատմամբ: Բանկը կարող է տնտեսավարող սուբյեկտների համար միաժամանակ բացել մի քանի վարկային հաշիվներ, երբ դրանք օգտագործվում են ոչ թե մեկ, այլ մի քանի օբյեկտների համար, և, հետևաբար, վարկը տրամադրվում է տարբեր պայմաններով, տարբեր ժամկետներում և տարբեր տոկոսադրույքներով: Նման առանձնացված փոխատվության հաշվառումը նպաստում է բանկային վերահսկողության իրականացմանը, վարկերի նպատակային օգտագործմանը և մարումը ժամանակին կատարելուն:

Փոխառուի վարկունակությունը չափազանց կարևոր նշանակություն ունի վարկ տրամադրելու նպատակահարմարությունը գնահատելու համար: «Վարկունակություն» նշանակում է, թե ինչպիսին են հաճախորդի հնարավորություններն ու պատասխանատվությունը՝ ժամանակին կատարելու իր պարտավորությունները:

Վարկի տրամադրման ռազմավարությունն ու մարտավարությունը պետք է ներկայացնեն առևտրային բանկերի վարկային քաղաքականության բովանդակությունը:

Սակայն առևտրային բանկերն իրենց վարկային քաղաքականությունը իրականացնելիս պետք է հաշվի առնեն երկրի քաղաքական ու տնտեսական պայմանները, բանկային օրենսդրության զարգացման մակարդակը, միջբանկային մրցակցությունը, ինչպես նաև բանկային ենթակառուցվածքների զարգացման աստիճանը և այլն:

Վարկային քաղաքականություն իրականացնելիս առևտրային բանկերը պետք է հաշվի առնեն նաև իրենց սեփական կապիտալի մեծությունը և միջոցներ ներգրավելու հնարավորությունները: Պետք է հաշվի առնեն այն պարտադիր տնտեսական նորմատիվների պահանջները, որոնք առևտրային բանկերի համար սահմանել է Կենտրոնական բանկը: Նորմատիվային սահմանափակումների սահմաններում առևտրային բանկերը ինքնուրույնաբար են որոշում ապագա հաճախորդների կազմը, վարկի տեսակները, ձևավորում

են փոխատվությունների ծրարը, սահմանում վարկային տոկոսադրույքները:

Իրենց ամենօրյա գործունեության ընթացքում առևտրային բանկերը բախվում են երկու հակադիր խնդիրների լուծման անհրաժեշտությամբ, այն է՝ վարկային գործունեության եկամտաբերության ավելացում և դրանց առնչվող ռիսկի նվազեցում:

Ինչպես ֆինանսական գործունեության բոլոր բնագավառներում, որտեղ առավել բարձր եկամուտները ստացվում են բարձր ռիսկայնություն ունեցող գործառնություններից, այնպես էլ առևտրային բանկերում վարկի օգտագործման դիմաց բարձր տոկոսները համարվում են յուրօրինակ վճար ռիսկի դիմաց: Ուստի փոխատվության ծրարը ձևավորելիս բանկերը պետք է պահպանեն բոլոր ներդրողների համար սահմանված հետևյալ սկզբունքը, այն է՝ զուգակցել բարձր եկամտաբեր և բավականին ռիսկային ներդրումները ցածր ռիսկային վարկավորման ուղղությունների հետ, ինչը պետք է արտացոլվի բանկի վարկային քաղաքականության ծրագրերում:

Վարկային ռիսկի նվազեցման պարտադիր պայմաններից մեկը փոխատվական ծրարի բազմազանեցումն է: Սա նշանակում է, որ փոխատվությունները պետք է տրամադրել տարբեր տնտեսավարական սուբյեկտներին՝ տնտեսության տարբեր ճյուղերի՝ համեմատաբար փոքր գումարներով, առավել կարճ ժամկետներով, բայց մեծ թվով հաճախորդների: Որպես ռիսկի իջեցման լրացուցիչ պայման՝ պետք է կիրառել նաև վարկի վերադարձման բազմազանեցումը՝ հենվելով փոխատվության վերադարձումը ապահովելու զանազան եղանակների վրա, այն է՝ ապահովվածություն անշարժ գույքով, երաշխիք, երաշխավորություն, ապահովագրություն և այլն: Այս կարգի պահպանումը հնարավորություն է տալիս փոխհատուցելու մեկ գործարքից առաջացած հնարավոր կորուստները մեկ այլ գործարքից ստացված եկամտի հաշվին:

Վարկի դիմաց վճար սահմանելու հիմնական գործոնները, որոնք հաշվի են առնում առևտրային բանկերը, հետևյալն են.

- վերաֆինանսավորման դրույքաչափերը, որոնք առևտրային բանկերի համար սահմանում է Կենտրոնական բանկը,
- միջբանկային վարկավորման միջին տոկոսադրույքները,
- միջին տոկոսադրույքը, որը վճարում է բանկը իր հաճախորդներին՝ հավաքագրված դեպոզիտների դիմաց,
- վարկային ռեսուրսների կառուցվածքը,
- վարկի առաջարկը և պահանջարկը հաճախորդների կողմից,

- վարկի տեսակը և ժամկետը, ինչի հիման վրա որոշվում է ռիսկի աստիճանը,
- երկրի դրամաշրջանառության կայունությունը:

Վարկային տոկոսադրույքները սահմանվում են ՀՀ ԿԲ -ի կողմից՝ հաշվեկշռային տոկոսադրույքի ոչ պվելի, քան կրկնապատիկի սահմաններում, ինքնուրույնաբար, կողմերի փոխադարձ համաձայնության հիման վրա վարկային պայմանագիրը կնքելիս:

Առևտրային բանկերի գործունեության արդյունավետության հիմնական բնագավառը վարկավորման ծավալների շարունակական ընդլայնումն է: Վարկավորումը, լինելով բանկերի ակտիվային գործառնությունների հիմնարար բաղադրիչը, մեծ նշանակություն ունի նաև երկրի տնտեսության զարգացման համար այնքանով, որքանով նպաստում է վերարտադրության անընդհատության ապահովմանը, տնտեսավարական սուբյեկտների ներուժի ամրապնդմանը:

Բանկային վարկավորումը երկրի տնտեսական աճը խթանելու մեծ հնարավորություններ է ընձեռում, որոնք, այսօրվա դրությամբ, դեռևս լիովին չեն օգտագործվում: Ավելին, առևտրային բանկերը ներկայումս չունեն մեծ հնարավորություններ օգտագործելու վարկը անգամ իրենց գործունեությունը ծավալելու համար: Այս պարագան պայմանավորված է նրանով, որ շատ դեպքերում բանկերը չեն կարողանում դիմագրավել այն ռիսկերին, որոնք ծագում են վարկային գործառնություններ իրականացնելու ընթացքում: Տրամադրված միջոցներ չվերադարձնելու նկատմամբ անհանգստությունը և, այդ առնչությամբ, խոշոր կորուստների հետ կապված վտանգը, ցածր շահութաբերությունը կաշկանդում են առևտրային բանկերին՝ լիովին օգտագործելու վարկավորման հնարավորությունները: Մյուս կողմից՝ տնտեսավարական սուբյեկտները, իրենց հերթին, չեն կարող երաշխավորել, որ ժամանակին կմարեն վերցված վարկը սեփական արտադրության շահութաբերության ցածր մակարդակի պատճառով: Սրանք են այն հիմնական պատճառները, որոնց հետևանքով վարկի բաժինը առևտրային բանկերի ակտիվների կառուցվածքում, ինչպես արդեն ցույց է տրվել, դեռևս չի գտնվում անհրաժեշտ մակարդակի վրա:

Վարկավորման գործընթացի հայրենական և արտասահմանյան փորձը վկայում է, որ վարկավորման արդյունավետության բարձրացման խնդիրը այսօր էլ արդիական է: Դրա լուծումից է կախված այն հակասության հաղթահարումը, որը գոյություն ունի վարկի պոզիտիվ հատկությունների և տնտեսավարական գործունեության մեջ դրանք օգտագործելու թերությունների միջև: Դրան մշտապես խանգարում է այն պարագան, որ շատ ցածր է վարկառուների՝

տնտեսավարական սուբյեկտների վարկունակության մակարդակը: Սա մասամբ պայմանավորված է նրանով, որ թույլ է կապը առևտրային բանկերի և նրանց հաճախորդների միջև, փոխհարաբերությունները շատ դեպքերում կրում են ձևական բնույթ, լիովին չի արմատավորված վարկային գծի սահմաններում տրամադրվող վարկավորման պրակտիկան: Հայրենական առևտրային բանկերը դեռևս լիովին չեն տիրապետում շուկայական տնտեսությանը բնորոշ վարկային գործիքների կիրառման առանձնահատկություններին: Նորմատիվային փաստաթղթերը, որոնք պետք է բացահայտեն ու գնահատեն վարկառուների վարկունակությունը, վարկի տրամադրման ու վերադարձման մեխանիզմը, վարկային գծի ծավալի հաշվարկը, վարկի մարման ժամկետները, դեռևս գրեթե գոյություն չունեն: Վարկի կազմակերպմանն առնչվող առևտրային բանկերի սեփական ընթացակարգերը, հաճախորդների վարկունակության վերաբերյալ հաշվարկները հաճախ կրում են ձևական բնույթ, հաշվի չի առնվում առևտրային բանկերի միջազգային փորձը:

Հաճախորդների վարկունակության վերաբերյալ հայրենական և արևմտյան հսկիչ մարմինները մինչև այժմ չունեն հստակ մոտեցումներ, թե որն է վարկունակության տեղը և դերը վարկային ռիսկերի կառավարման համակարգում: Համեմատության մեջ չեն դրվում վարկային ռիսկի մեծությունը և համապատասխան փոխառուի գործունեության հուսալիությունը: Սակայն բազեյան կոմիտեի նոր պահանջները բանկային հսկողության վերաբերյալ, որը պլանավորվում է գործողության մեջ դնել 2006 թվականից, արմատապես կփոխեն ձևավորված սկզբունքները: Մասնավորապես, կմեծանա բանկերի և ռեյտինգային գործակալությունների դերը փոխառուների վարկունակության գնահատման գործում: Այդ գնահատումը սկսվում է բանկերի կապիտալի բավարար մակարդակի որոշումից:

Շատ մասնագետներ կարծում են, որ բանկային ոլորտի՝ հատկապես վարկավորման բնագավառի անկատարությունը, զարգացման ոչ բավարար մակարդակը, հետևանք են այն հանգամանքի, որ վարկավորման գործընթացը չի դիտվում որպես համակարգ: Այս խնդրի լուծումը կարող է նպաստել մի կողմից՝ վարկի դերի բարձրացմանը՝ տնտեսության իրական հատվածի զարգացումը խթանելու նպատակով, իսկ մյուս կողմից՝ կատարելագործելու վարկային գործի կառավարման համակարգը՝ նպատակ ունենալով նվազագույնի հասցնել վարկային ռիսկերը: Նույն հեղինակները վստահ են, որ առևտրային բանկերի ակտիվային գործառնություններում տեղ գտած թերություններն ու բացթողումները զգալի չափով պայ-

մանավորված են նրանով, որ տնտեսավարման պրակտիկայում բացակայում է կամ չի օգտագործվում «վարկավորման համակարգ» հասկացությունը⁹:

Եվ այսպես, արտասահմանցի, հիմնականում ռուսական բանկային գործի առանձին տեսաբաններ¹⁰ կարծում են, որ «վարկավորման համակարգ» հասկացության բացակայությունը նվազեցնում է վարկային միջոցների օգտագործման արդյունավետությունը, խախտվում է դրանց նպատակային բնույթը և անխուսափելիորեն խափանվում է ողջ վարկային հարաբերությունների շղթան: Վարկավորման համակարգ կառուցելու ճանապարհին դրանց ջատագովները անխուսափելիորեն պետք է առնչվեն վարկային համակարգի կառուցման սկզբունքին շատ լավ հասկանալով, որ դա չի կարող հենվել ձևավորման տարբեր սկզբունքների վրա: Նույնը վերաբերում է նաև բանկային համակարգին: Մասնագիտական ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան գրականության մեջ տիրապետող է այն տեսակետը, որ ինչպես վարկային համակարգի, այնպես էլ բանկային համակարգի ձևավորման հիմքում ինստիտուցիոնալ սկզբունքն է: Այսպես, բանկային գործի հայտնի մասնագետ Ե. Ժուկովը կարծում է, որ բանկային համակարգն իրենից ներկայացնում է տարբեր ֆինանսավարկային ինստիտուտների ամբողջություն, որոնք գործում են փոխատվական կապիտալի շուկայում և իրականացնում են դրամական կապիտալի հավաքագրում: Նույնպիսի ինստիտուցիոնալ մոտեցում գոյություն ունի նաև վարկային համակարգերի ձևավորման վերաբերյալ: Ե. Ժարկովսկայան կարծում է, որ բանկային համակարգը տարբեր ազգային բանկերի և վարկային հաստատությունների ամբողջություն է, որոնք գործում են ընդհանուր ֆինանսավարկային մեխանիզմի շրջանակներում¹¹:

Հասկանալով, որ վարկավորման համակարգը չէր կարող կառուցվել նույն ինստիտուցիոնալ սկզբունքով, նոր համակարգ ստեղծելու կողմնակիցները առաջ են քաշում, այսպես կոչված, ձևավորման ֆունկցիոնալ սկզբունքը: Այդ պատճառով առաջարկվում է փոխել և՛ վարկային համակարգի, և՛ բանկային համակարգի ձևավորման սկզբունքները՝ անցում կատարելով ինստիտուցիոնալ սկզբունքից ֆունկցիոնալ սկզբունքին: Դրան համապատասխան,

⁹ О.И.Лаврушин, О.Н. Афанасьева, С.А.Корниченко, Банковское дело, уч. пособие, М., 2005 г., стр. 11.

¹⁰ Общая теория денег и кредита, ЮНИТИ, 1995, стр. 19.

¹¹ Банковское дело, изд. Омега-Л, М., 2005г. стр. 44.

վարկային համակարգը ներկայանում է որպես հասարակության մեջ վարկի գործառույթների ապահովման, դրա էության և ֆունկցիաների իրականացման համակարգ¹²: Հետաքրքրական այն է, որ նոր համակարգի ստեղծման կողմնակիցները նույնպես, ինչպես ընդունված է, առանձնացնում են վարկային համակարգի երեք օղակներ. դրանք են՝ ազգային կենտրոնական բանկերը, առևտրային բանկերը, մասնագիտացված ֆինանսաբանկային ինստիտուտները, սակայն շեշտը դնում են դրանց կողմից իրականացվող վարկային գործառնությունների վրա՝ համարելով դրանք բազիս, որոնց վրա կառուցվելու են վարկային համակարգի բոլոր տարրերը և, դրանց հետ կապված, ժամանակավորապես ազատ դրամական միջոցների շրջապտույտը: Հենց սա էլ համարում են վարկային համակարգի ֆունկցիոնալ ասպեկտը: Ընդ որում, վարկային հարաբերությունների օբյեկտ են համարում այն արժեքի շարժումը, որը տրամադրվում է վերադարձելիության հիմունքներով: Այդ արժեքների տրամադրումը, ստացումը և օգտագործումը պետք է տեղի ունենան միայն վարկային գործընթացին բնորոշ պայմաններում, այն է՝ վճարելիության, ժամկետայնության, ապահովվածության և նպատակայնության սկզբունքներով:

Ձարգացնելով վարկային համակարգը ըստ ֆունկցիոնալ հատկանիշի կառուցման իրենց տեսությունը՝ նրանք որպես ելակետ են ընդունում վարկային հարաբերությունների գործընթացի մասնակիցների առնչությունները: Դրան համապատասխան, վարկային հարաբերությունների սուբյեկտ են համարում ոչ թե բանկերն ընդհանրապես, այլ, մասնավորապես, առևտրային բանկերը, որոնք փոխատվություններ են տրամադրում վարկառուներին՝ որպես վարկային հարաբերությունների կողմերից մեկին: Եվ այստեղից կատարում են հետևություն. վարկային համակարգը մի համակարգ է, որն ապահովում է ինչպես ավանդատուների, այնպես էլ վարկառուների շահերը: Այդ նույն տրամաբանությամբ վարկային համակարգում ընդգրկում են նաև մասնագիտացված հաստատությունները, որոնք նույնպես, ինչպես նույն հեղինակներն են նշում, կազմակերպում ու իրականացնում են վարկային հարաբերությունները: Ընդ որում, չեն մոռանում, որ վարկային համակարգի գլխավոր օղակը առևտրային բանկերն են: Այստեղից եզրակացվում է, որ բանկային համակարգը վարկային կազմակերպությունների ձևերի ու տիպերի, ինչպես նաև դրանց գործառնությունների ամբողջու-

¹² О.И.Лаврушин, О.Н. Афанасьева, С.А.Корниенко, Банковское дело, уч. пособие, М., 2005 г., стр. 11.

թյունն է: Բանկերը, մասնագիտացված ֆինանսական ինստիտուտները, որոնք կատարում են բանկային գործառնություններ, բայց չունեն բանկային կարգավիճակ, ինչպես նաև որոշ լրացուցիչ հաստատություններ, որոնք ձևավորում են բանկային ենթակառուցվածքները, ապահովում են վարկային ինստիտուտների կենսագործունեությունը (տարբեր տեսակի ձեռնարկություններ, գործակալություններ, ծառայություններ, ինչպես նաև տեղեկատվական, մեթոդական, գիտական, կապի միջոցներ և այլն): Այստեղից նույնպես հետևություն է արվում, որ ֆունկցիոնալ ասպեկտը հնարավորություն է տալիս առավել խորությամբ բացահայտելու վարկային համակարգի էությունը. այնքանով, որքանով դա բնորոշվում է որպես վարկային հարաբերությունների ամբողջություն և համարվում է վարկային համակարգի առանցքը:

Այս կապակցությամբ անհարժեշտ ենք համարում նշել հետևյալը.

1. Ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում գոյություն ունեն վարկային ոլորտի երկու համակարգեր՝ բանկային և վարկային: Ընդ որում, բանկային համակարգը ինստիտուցիոնալ սկզբունքով միավորում է բոլոր տեսակի բանկերը, որոնց գլխավորում է ազգային Կենտրոնական բանկը: Այդ համակարգի առանցքը կազմում են առևտրային և այլ մասնագիտացված բանկերը (ներդրումային, հիպոթեքային, խնայողական և այլն): Ինչ վերաբերում է վարկային համակարգին, ապա այստեղ, բացի բանկերից, ընդգրկված են նաև, ինչպես արդեն նշվել է, մասնագիտացված ֆինանսական ինստիտուտներ, որոնք կատարում են բանկային գործառնություններ, բայց չունեն բանկային կարգավիճակ:

Բանկային գործի վարման միջազգային փորձը ցույց է տվել, որ վարկային ոլորտի նման կառուցվածքը լիովին իրեն արդարացրել է: Մինչդեռ, վարկային ոլորտի նոր տեսության կողմնակիցները, ըստ էության, բացառում են «բանկային համակարգ» հասկացությունը այն մեկնաբանությամբ, որ դա վերաբերում է վարկային համակարգին: Փոխարենը առաջարկում են կիրառել «վարկավորման համակարգ» հասկացությունը:

2. Նման փոփոխությունը հիմնավորվում է նրանով, որ, ինչպես գործող վարկային համակարգը, այնպես էլ բանկային համակարգը կազմավորվել են ինստիտուցիոնալ սկզբունքով, մինչդեռ, ինչպես իրենք են կարծում, պետք է ձևավորվեն ֆունկցիոնալ սկզբունքով, ինչը հնարավորություն կտա ծավալելու վարկային հարաբերությունները վարկառուների հետ՝ իրականացնելով արդյունավետ

վարկային քաղաքականություն և այդ ճանապարհով բարձրացնելով վարկային ռեսուրսների օգտագործման մակարդակը: Մեր կարծիքով, նշված փաստարկներն անհիմն են: Նախ, ուզում ենք նշել, որ և՛ վարկային, և՛ բանկային համակարգերի կազմավորման ինստիտուցիոնալ սկզբունքի հիմքում ընկած է հենց ֆունկցիոնալ սկզբունքը. համակարգերի մեջ կարող են միավորվել միայն նույնաբերույթ գործառնություններ կատարող ինստիտուտները: Ինչ վերաբերում է վարկային հարաբերությունների ծավալմանը և դրանց արդյունավետության բարձրացմանը, ապա դրանք նույնպիսի հաջողությամբ կարելի է իրականացնել նաև ինստիտուցիոնալ սկզբունքով համակարգի ձևավորման պայմաններում:

3. «Վարկավորման համակարգ» ստեղծելու կողմնակիցները կարծում են, որ դրանով տեսական հիմք կապահովվի՝ բարձրացնելու վարկառուների վարկունակությունը, ինչը այսօր համարվում է կարևոր հիմնախնդիր:

Սակայն ներկայումս գոյություն ունի և առևտրային բանկերի տնտեսավարման պրակտիկայում լայնորեն կիրառվում է վարկառուների վարկունակության գնահատման ավելի գործնական ու արդյունավետ եղանակ, որի առաջին արդյունքները հուսադրող են: Խոսքը վերաբերում է ֆինանսատնտեսական գործունեության փաստացի արդյունքների վերլուծության միջոցով վարկառուների վարկունակության գնահատմանը: Նման վերլուծությունն առանձին բարդություն չի ներկայացնում և ոչ էլ երկար ժամանակ է պահանջում: Վարկունակության գնահատման համար բավական է վերլուծել վարկառուների ֆինանսական գործակիցների համակարգը: Մասնավորապես՝

- Անկախության գործակիցը, որը ներկայացնում է տնտեսավարական սուբյեկտների սեփական կապիտալի (ՍԿ) և հաշվեկշռի հանրագումարի (ՀՀ) հարաբերությունը.

$$(ԱԳ) = \frac{ՍԿ}{ՀՀ}$$

Այս գործակցի նվազագույն նորմատիվը սահմանված է ոչ պակաս, քան 0,5: ԱԳ-ի աճը վկայում է, որ բարձրացել է տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական անկախության աստիճանը, ինչը իր պատավորությունների կատարման երաշխիք է:

- Սեփական և փոխառու կապիտալների հարաբերակցության գործակիցը (ՀԳ), որը տնտեսավարական սուբյեկտների սեփական կապիտալի (ՍԿ) և փոխառու կապիտալի (ՓԿ) հարաբերությունն է ներկայացնում.

$$(ՀԳ) = \frac{\PhiԿ}{ՍԿ}$$

Այս գործակցի նորմատիվային առավելագույն սահմանը պետք է լինի 1:

- Արտադրական պաշարների՝ սեփական միջոցներով ապահովվածության գործակիցը (ԱԾԳ), որը ներկայացնում է սեփական կապիտալի ու երկարաժամկետ պարտավորությունների (ԵՊ) գումարի և ոչ ընթացիկ ակտիվների տարբերության (ՍԿ-ՈԸԱ) ու ընթացիկ ակտիվների (ԸԱ) հարաբերությունը.

$$ԱԾԳ = \frac{ՍԿ + ԵՊ - ՈԸԱ}{ԸԱ}$$

Այս գործակցի համար սահմանված նորմատիվի մեծությունը 1 է: Եթե գործակիցը ցածր է նորմատիվի մեծությունից, ապա նշանակում է, որ ձեռնարկությունը ապահովված չէ սեփական միջոցներով՝ ծածկելու պաշարները և ծախսերը:

- Մանրելու գործակիցը (ՍԳ) ներկայացնում է սեփական կապիտալի ու երկարաժամկետ պարտավորությունների և ոչ ընթացիկ ակտիվների տարբերության ու սեփական կապիտալի հարաբերությունը.

$$ՍԳ = \frac{ՍԿ + ԵՊ - ՈԸԱ}{ՍԿ}$$

Որքան մեծ է այս գործակիցը, այնքան դրական է բնութագրվում տնտեսավարական սուբյեկտների ֆինանսական վիճակը:

- Իրացվելիության գործակիցը (ԻԳ) ներկայացնում է ընթացիկ ակտիվների (ԸԱ) և տնտեսավարական սուբյեկտների ընթացիկ պարտավորությունների (Պ) հարաբերությունը.

$$ԻԳ = \frac{ԸԱ}{Պ}$$

Այս գործակցի նորմատիվային մեծությունն առնվազն 2 է և ցույց է տալիս տնտեսավարական սուբյեկտների հնարավորությունների աստիճանը՝ ժամանակին կատարելու իրենց պարտավորությունները:

Անհրաժեշտության դեպքում առևտրային բանկերը կարող են օգտագործել նաև տնտեսավարական սուբյեկտների գործարար ակտիվությունը և շահութաբերությունը բնութագրող գործակիցները: Այս բոլոր գործակիցների ուսումնասիրության հիման վրա կարելի է բավական ճշգրտությամբ գնահատել տնտեսավարական սուբյեկտների վարկունակության մակարդակը:

Ինչպես արդեն նշել ենք, 2006 թվականից նախատեսվում է կիրառել Բազելյան կոմիտեի կողմից մշակված վարկառուների վարկունակությունը գնահատելու վարկանիշային (ռեյտինգային) եղանակը, որը, կարելի է ենթադրել, նույնպես հիմնված կլինի տնտեսավարական սուբյեկտների գործունեությունը գնահատող ցուցանիշների վրա:

Բովանդակություն

1. ՀՀ առևտրային բանկերը և դրանց ձևավորման օրինաչափությունները	3
2. Առևտրային բանկերի պասիվային և ակտիվային գործառնությունները և դրանց արդյունավետության բարձրացման խնդիրները	19

Կառլեն Յնայակի Արգարյան

Առևտրային բանկերի էությունն ու գործառույթները

(դասախոսություն)

Հրատ. խմբագիր՝ Գ.Յովհաննիսյան
Սրբագրիչ՝ Ջ.Յովհաննիսյան

Համակարգչային ձևավորումը՝ Ա.Մարգարյանի

Պատվեր՝ 35: Չափս՝ 60x84 1/16:
2,4 հեղ. մանուլ, 2,5 հրատ. մանուլ,
3 տպ. մանուլ, 2,7 տպ. պայմ. մանուլ:
Տպաքանակ՝ 100:

«Տնտեսագետ» հրատարակչություն
Տպագրված է «Տնտեսագետ» հրատարակչության
տպագրական արտադրամասում
Երևան 25, Նալբանդյան, 128